

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
(ՆԵՐԱՌՅԱԼ «ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ-ՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ)
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվեքննության հիմքը

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ 8/4 որոշում:

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ ներառյալ իրավա-նախորդները:

Ստուգման հիմքը

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ 8/5 որոշում:

Ստուգման օբյեկտը

«Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ:

Հաշվեքննության առարկան

«Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսական գործունեություն:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը:

Հաշվեքննության կատարման ժամկետը

2019 թվականի ապրիլի 17-ից մինչև 2019 թվականի հոկտեմբերի 31-ը:

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Իրականացվել է կատարողականի հաշվեքննություն: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը:

Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի յոթերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Կարեն Կարապետյանը:

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով ծրագրային հարցի առանձնահատկությունները, ինչպես նաև հաշվեքննության և ստուգման օբյեկտների՝ տվյալ ոլորտում առկա գործառության մասնահատկությունները, հիմք ընդունելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի ա) ենթակետի դրույթները, հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների արդյունքների (արձանագրություն) հիման վրա ներկայացվում է հաշվետվություն՝ նպատակային արդյունավետության (օգտավետության) կատարողականի սկզբունքի շրջանակներում:

Կատարողականի հաշվեքննության արդյունքում գնահատվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության, «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության Հայաստանի Հանրապետությունում չափումների միասնականության ապահովման բնագավառում իրենց լիազորությունների շրջանակներում կատարված գործունեության արդյունքում 2017-2018թթ. սահմանված նպատակների իրականացման և պլանավորված արդյունքների ստացման մակարդակը: Այսպես, համաձայն «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի՝

Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական չափագիտության ոլորտում չափումների միասնականության ապահովման պետական կառավարումն իրականացնում է չափագիտության լիազոր մարմինը (ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ ներառյալ իրավանախորհներն ու իրավահաջորդները), իսկ նույն օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ չափագիտության բնագավառում պետական քաղաքականությունն իրականացնում է ազգային մարմինը («Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ):

Հիմք ընդունելով «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջները, ՀՀ կառավարության 11.02.2016թ. թիվ 113-Ն որոշմամբ սահմանվել է օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների ցանկը, որի հիմնական նպատակներից է՝ չափումների ոչ հավաստի արդյունքների բացասական հետևանքներից սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Կատարողականի հաշվեքննության արդյունքում արձանագրվել է, որ հաշվեքննությամբ ընդգրկված ժամանակահատվածում (2017-2018թթ.) Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական չափագիտության ոլորտում ոչ լիազոր, ոչ էլ ազգային մարմինների կողմից, իրենց լիազորությունների և պարտականությունների շրջանակներում, չի կատարվել պետական չափագիտական հսկողության և վերահսկողության ենթակա ոլորտներում, ներմուծված/արտադրված օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների ստուգաչափումների մակարդակի ու չափագիտական

ապահովվածության ամբողջական վերլուծություն: Նշվածի բացակայությունը հանրության համար խիստ մեծացնում է չափումների ոչ հավաստի արդյունքների բացասական հետևանքների հնարավորությունը:

Համադրելով հաշվեքննությամբ արձանագրված արդյունքները (շարադրված է ստորև), Հայաստանի Հանրապետությունում պետական չափագիտական հսկողության և վերահսկողության ենթակա ոլորտները կանոնակարգող օրենսդրական ու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի իմպերատիվ պահանջների ամբողջական կատարման արդյունքում ակնկալվող արդյունքների հետ, ՀՀ հաշվեքննիչ պալատը եզրակացնում է՝ Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական չափագիտական հսկողության և վերահսկողության ենթակա ոլորտներում համապատասխան լիազորված մարմինների 2017-2018թթ. գործունեության արդյունքը չի հանգեցրել սահմանված նպատակների ամբողջական իրականացմանն ու պլանավորված արդյունքների ստացմանը:

Կարեն Կարապետյան
ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ
14 հոկտեմբերի 2019 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,
Բաղրամյան փող. 19, ք. Երևան,
Հայաստանի Հանրապետություն

Ընդհանուր մաս

Չափագիտության ազգային ինստիտուտը կոչված է ապահովելու՝ չափումների միասնականությունը ՀՀ տարածքում, որը հանդիսանում է ազգային տնտեսության որակի ենթակառուցվածքի հենքային սյունը: Չափագիտության ազգային ինստիտուտն իրականացնում է էլեկտրաէներգիայի, գազի և հեղուկների հաշվիչների, ուժի, ամրության և ճնշման չափման միջոցների, կշեռք/կշռաքարերի, ժամանակի հաճախականության և ռադիոէլեկտրոնային սարքավորումների, ֆիզիկաքիմիական, ջերմային և իոնիզացիոն և այլ չափումների տեսակի սարքավորումների չափագիտական հսկողություն՝ փորձարկում, տեսակի հաստատում, ստուգաչափում և փորձաքննություն: Օրենսդրական չափագիտական հսկողության նպատակն է ոչ միայն ապահովել ՀՀ քաղաքացիների անվտանգությունը առողջապահական տեսանկյունից, այլ նաև կարգավորել սպառող վաճառող առևտրային հարաբերությունները՝ տեղիք չփախվելով զեղծարարությանը:

«Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-22-Ն, այսուհետ՝ Օրենք) և ՀՀ կառավարության 04.07.2012թ. թիվ 882-Ն որոշման համաձայն լիազոր մարմին է ճանաչվել ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, որը օրենսդրական չափագիտության ոլորտներում իրականացնում է չափումների միասնականության ապահովման պետական կառավարումը, մշակում և համակարգում է ոլորտի պետական քաղաքականությունը, ինչպես նաև իրականացնում է վերահսկողություն և վարչական վարույթ: ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման համաձայն ազգային մարմին է սահմանվել «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն, որը ստեղծվել է «Չափագետ» ՓԲԸ-ի հենքի վրա՝ ՀՀ կառավարության 22.07.2004թ. թիվ 1032-Ն որոշմամբ:

➤ Կառավարման խորհուրդ և կանոնադրության պահանջներ

**Կառավարման խորհուրդ
փաստացի չի ձևավորվել, չի
գործել, նիստեր չի
գումարվել, խորհրդին
վերապահված
լիազորությունները չի
կատարվել:**

Չափագիտության ազգային մարմնի ղեկավարման գլխավոր մարմինը կառավարման խորհուրդն է, որի անհատական կազմը հաստատվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարի 24.02.2016թ. թիվ 132-Ա հրամանով և դրանից հետո անհատական կազմի որևէ փոփոխություն չի իրականացվել, նոր կազմ չի հաստատվել, ավելին՝ կազմում ներառված անձինք, հաշվետու ժամանակահատվածում, դադարել են լինել համապատասխան գերատեսչության

աշխատակիցներ: Միաժամանակ, 2017-2018թթ. խորհրդի նիստեր առհասարակ չեն գումարվել, ինչի հետևանքով չի պահպանվել Օրենքի 12-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները: Վերոնշյալը չպահպանելու հետևանքով, չի իրականացվել նաև կառավարման խորհրդին Օրենքով վերապահված լիազորությունները, մասնավորապես՝

- չափագիտության ազգային մարմնի աշխատանքային ծրագրերը չեն հաստատվել և մարմինը փաստացի գործունեություն է ծավալել առանց տարեկան աշխատանքային ծրագրի,
 - չափագիտության ազգային մարմնի գործունեության պլանավորման և խնդիրների կանոնակարգման վերաբերյալ խորհուրդը որոշումներ չի ընդունել,
 - չափագիտության ազգային մարմնի գործունեության տարեկան արդյունքները չի հաստատվել և չի հրապարակվել,
- և այլն:

**Վերստուգող հանձնաժողով չի
ձևավորվել և, ըստ էության,
ֆինանսատնտեսական
գործունեության նկատմամբ
վերահսկողական մեխանիզմը
բացակայել է:**

Չի կատարվել ՓԲԸ-ի կանոնադրության 10-րդ գլխի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի պահանջները՝ 2017-2018թթ. բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից վերստուգող հանձնաժողով չի ձևավորվել և ՓԲԸ-ի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողություն չի իրականացվել: Տարեկան հաշվեկշիռը հաստատվել է առանց

ՓԲԸ-ի գործունեության տարեկան հաշվեկշռի և հաշվետվությունների ստուգման վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի եզրակացության: Այդ նույն ժամանակահատվածում արտաքին աուդիտորի ծառայություններ ևս չի ներգրավվել: ՓԲԸ-ում, ըստ էության, բացակայել է վերահսկողական մեխանիզմը:

Չի կատարվել «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի «ա» կետի պահանջները՝ հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների տվյալների արժանահավատությունն ապահովելու

նպատակով՝ տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ 2018թ. ՓԲԸ-ում չի իրականացվել ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրում:

**ՓԲԸ-ի պահուստային
հիմնադրամը կանոնադրական
կապիտալի 15%-ի փոխարեն
կազմել է շուրջ 4.5%:**

Չի պահպանվել «Բաժնետիրական ընկերություն-ների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի և ՓԲԸ-ի կանոնադրության 6-րդ գլխի 1-ին կետի պահանջները՝ 31.12.2018թ. դրությամբ պահուստային հիմնադրամի չափը 15%-ի փոխարեն կազմել է կանոնադրական

կապիտալի շուրջ 4.5%-ը: Ավելին, չի պահպանվել նաև կանոնադրության 8-րդ գլխի 1-ին կետի պահանջը՝ ՓԲԸ-ն 2017թ. ունենալով ընդամենը 2,811.0 հազ. դրամի շահույթ, վճարել է 4,080.0 հազ. դրամի շահաբաժին, այն դեպքում, երբ շահաբաժին կարող էր վճարել միայն պահուստային հիմնադրամի անհրաժեշտ չափով համալրելուց հետո:

2017-2018թթ. պետական չափագիտական հսկողության և վերահսկողության ենթակա ոլորտներում ՓԲԸ-ն, կանոնադրության համաձայն, տնտեսվարող սուբյեկտների չափագիտական վիճակի և ապահովվածության վերաբերյալ վերլուծություններ չի կատարել:

**➤ Վարչակազմակերպական կառուցվածք և անձնակազմի
կառավարում**

**ՓԲԸ-ի վարչակազմակերպական
կառուցվածքում չնախատեսված
թվով 5 հաստիքները զբաղեցրած
անձանց աշխատավարձի չափը
կազմել է 16,080.0 հազ. դրամ:**

ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՓԲԸ-ի կառուցվածքի և հաստիքացուցակների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2017-2018թթ. վարչակազմակերպական կառուցվածքներում բացակայել է հաստիքացուցակում առկա

գլխավոր տնօրենի երկու խորհրդականների, գլխավոր տնօրենի գլխավոր խորհրդականի, իրավախորհրդատուի և արդյունաբերական կենտրոնի տեխնիկական կառավարչի հաստիքները, որոնց աշխատավարձը հաստիքացուցակում կազմել է 16,080.0 հազ. դրամ: Հաստիքացուցակում բացակայել է վարչակազմակերպական կառուցվածքում նախատեսված որակի կառավարչի և տեխնիկական կառավարչի հաստիքները: Ավելին, հաստատված վարչակազմակերպական կառուցվածքում արդյունաբերական կենտրոն որպես առանձին ստորաբաժանում, առհասարակ չի նախատեսվել:

Ձևի դիրքորոշում Վարչակազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի անհամապատասխանության կապակցությամբ նշենք, որ տնօրենի խորհրդականների ու իրավախորհրդատուի հաստիքները կառուցվածքային միավորներ չեն ու դրանք չպետք է Վարչակազմակերպական կառուցվածքում ներառվեն: Կառուցվածքը ներկայացվում և հաստատվում է ընկերության ստորաբաժանումների կազմակերպչական նպատակներով, իսկ խորհրդականների և իրավախորհրդատուի հաստիքները ստորաբաժանում չեն հանդիսանում, և նրանց առկայությունը կառուցվածքում Ձեր նշված տարիներին չի նախատեսվել: Նշված հաստիքների աշխատավարձի ֆոնդը

հաստատվել է հաստիքացուցակով ու կառուցվածքի հետ չի պայմանավորված: Այս օրինակով ուզում եմ բացատրել, նաև 2016թ.-ին տեղ գտած անհամապատասխանությունը, Արդյունաբերական կենտրոնի հաստիքների առկայությունը կամ նրանց բացակայությունը կառուցվածքում:

Այդ կապակցությամբ փաստացի կատարված աշխատավարձի վճարման գումարի նշումն առանց հստակ մեկնաբանության հնարավոր չէ. Անձինք վճարվել են այն փաստով, որ կատարել են համապատասխան աշխատանք: Եթե անգամ վարչակազմակերպական կառուցվածքում այդ հաստիքների մասին նշում չկա, ինչպես որ նշում չկա այլ հաստիքների մասին, ապա դրանից որևէ խախտման մասին հետևություն անել չի կարելի:

Հաշվեքննողի արձագանք Չի ընդունվել, քանի որ վերոնշյալ հաստիքային միավորները պետք է պարտադիր արտացոլվեին վարչակազմակերպական կառուցվածքում:

Համաձայն Նախարարի 19.04.2017թ. թիվ 349-Ա հրամանի ՓԲԸ-ում նախատեսվել է հաստիքների կրճատում՝ թվով 251 հաստիքից հասցնելով թվով 180-ի: Սակայն հաստիքների կրճատման գործընթացն ավարտվել է 2018թ. ապրիլին և այդ ժամանակահատվածում ամսական եղել է միջինում թվով 14 ավելի հաստիք: 31.12.2018թ. դրությամբ թափուր հաստիքների թիվը կազմել է թվով 22-ը:

ՉԱՒ ղեկավարողում Այդ կապակցությամբ անհրաժեշտ է հաշվի առնել ընկերության ընթացիկ գործունեության իրականացման ապահովման հանգամանքը, որի պարագայում երկու ամսվա ընթացքում շուրջ 70 աշխատողի աշխատանքից ազատելը կարող էր հանգեցնել որոշ գործառույթների կատարման անհնարինություն:

Հաշվեքննողի արձագանք Չի ընդունվել, քանի որ մեջբերված հիմնավորումը ենթադրական բնույթի է:

Կառուցվածքային ստորաբաժանումների և հաստիքների գործառույթները չեն սահմանվել, իսկ աշխատանքային պայմանագրերի ճնշող մեծամասնությունում պարտականությունները հստակ չեն ամրագրվել:

Կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը և հաստիքների պաշտոնական հրահանգները վերջին անգամ սահմանվել են 2015թ., փոփոխված ստորաբաժանումների և հաստիքների գործառույթները 30.12.2018թ. դրությամբ չի սահմանվել: Աշխատանքային պայմանագրերի ուսումնասիրությունից պարզվել է, որ դրանց ճնշող մեծամասնությունում պարտականությունները հստակ չի սահմանվել և չի ամրագրվել: Ընտրանքային

ուսումնասիրությունից պարզվել է, որ 2017թ. ՓԲԸ-ի վարչակազմակերպական կառուցվածքում և հաստիքացուցակում հաստատված գլխավոր տնօրենի տեղակալի 4 հաստիքի փոխարեն փաստացի եղել է 5-ը, որից 2-ը միաժամանակ համակարգել են կառուցվածքային միևնույն ստորաբաժանման աշխատանքները: Ավելին, նրանցից մեկը նշանակվել է գոյություն չունեցող ստորաբաժանման՝ արդյունաբերական կենտրոնի, աշխատանքները համակարգող: Տեխնիկական կառավարիչը (ամսական աշխատավարձը 220.0 հազ. դրամ) ստացել է հավելում (ամսական 110.0 հազ.դրամ), այնպիսի աշխատանքների կատարման համար, որոնք չափագիտության ոլորտի հետ առնչություն չեն ունեցել: Վերջինս, տեղափոխվելով իոնիզացիոն չափումների լաբորատորիա՝ որպես առաջատար մասնագետ (ամսական աշխատավարձը 160.0 հազ. դրամ), շարունակել է ստանալ հաստիքի 50%-ի չափով հավելավճարը (ամսական 80.0 հազ.դրամ): Այնուհետև, նույն անձը, նշանակվել է որպես որակի կառավարիչ և առանց պարտականությունների ավելացման վերաբերյալ լրացուցիչ համաձայնագրի,

ամսական ստացել է 70.0 դրամ լրավճար՝ գոյություն չունեցող տրամաչափարկման լաբորատորիայում ընդգրկված մասնագետներին օժանդակության, խորհրդատվության և այլ աշխատանքների համար: 2017-2018թթ. վերջինիս հաշվարկված 2,070.0 հազ. դրամի ծախսը չի հիմնավորվել: Գլխավոր տնօրենի տեղակալին, աշխատանքի ծավալի ավելացման հիմնավորմամբ, վճարվել է ամսական 100.0 հազ. դրամ լրավճար, այն դեպքում, երբ վերջինիս պարտականությունները հստակ սահմանված չի եղել: Վճարված 600.0 հազ. դրամի լրավճարը ևս չի հիմնավորվել: Տնօրենի հրամանի համաձայն՝ իրավական հարցերով տարածքային չափագիտական ծառայության առաջատար մասնագետ է նշանակվել (ամսական աշխատավարձը 160.0 հազ. դրամ), այն դեպքում, երբ հաստիքացուցակում նման հաստիք նախատեսված չի եղել:

ՉԱԻ դիրքորոշում 2015թ. հաստատված կանոնակարգերը և պաշտոնեական հրահանգները գործում են և ենթակա են վերանայման նոր՝ փոփոխված կառուցվածքի ստորաբաժանումների կանոնակարգերի և աշխատակիցների պաշտոնեական հրահանգների հաստատումից հետո, որոնք գտնվում են մշակման գործընթացում, ինչի մասին առկա է տնօրենի 2019թ-ի հունիսի 18-ի N°21-Ն հրամանը և միջոցառումների հաստատված ժամանակացույցը:

Աշխատանքային պայմանագրերում չեն մանրամասնվում աշխատանքային պարտականությունները, քանզի դրանք նկարագրվում և սահմանվում են պաշտոնեական հրահանգներով: Արդյունաբերական կենտրոնի հետ կապված բոլոր գործառույթները պայմանավորված են եղել այն ստեղծելու նպատակով, սակայն ՀՀ կառավարության ու համաշխարհային բանկի կողմից ժամկետների վերանայման հետ կապված առաջացել են անհամապատասխանություններ:

Գլխավոր տնօրենի 16.03.2016 թվականի 43-Կ հրամանով այդ ժամանակվա տեխնիկական կառավարիչ Գ.Մ-ին վճարված հավելումը՝ հասարկի 50%-ի չափով, կատարվել է, քանի որ Գ.Մ. իբրև լրացուցիչ աշխատանքային ծավալ կատարել է Հայկական արոմային էլեկտրակայան (ՀԱԷԿ) ՓԲԸ-ի դոզաչափական հսկողության սարքավորումների ստուգաչափում, ինչի մասին են վկայում ՀԱԷԿ ՓԲԸ-ին տրված ստուգաչափման վկայականները: Ընկերությունն իրականացնում է ստուգաչափման աշխատանքներ ՀԱԷԿ-ում, և հատկապես դոզաչափական հսկողության սարքավորումների ստուգաչափումը խիստ կարևոր է՝ արոմակայանի անվտանգ շահագործման, շրջակա միջավայրի պահպանության, ՀՀ էներգետիկ անկախության և ՀՀ անվտանգության տեսանկյունից:

Ընկերությունը փաստացի հավաքարմագրված տրամաչափարկման լաբորատորիաներ չունի, և ՓԲԸ-ում կատարվում են աշխատանքներ, որպեսզի հիմնվեն տրամաչափարկման կարողություններ: Փաստաթղթում ևս նշված է «լաբորատորիայի հիմնման աշխատանքներ» եզրույթը, ուստի ակնհայտ է, որ տրամաչափարկման լաբորատորիաներ (հավաքարմագրված) Ընկերության կազմում դեռևս գոյություն չունենին:

2016թ-ին Ա. Հ. նշանակվել է Գլխավոր տնօրենի տեղակալ, 2017թ-ի մայիսից նրան նշանակվել է հավելավճար աշխատանքների ծավալի ավելացմամբ պայմանավորված՝ կտրուկ ավելացել է որպես ԿՕՕՄԵՏ-ի կոնսուլտային անձի նրա աշխատանքի ծավալը /ելից գրություն ՉԱԻ 101 01.03.2016թ./: Ընդ որում՝ նման գործառույթ նշված անձին աշխատանքի ընդունելիս չի եղել, ուստի այն չէր կարող ներառվել Ա.Հ. աշխատանքային պարտականություններում:

Հաշվեքննողի արձագանք Չի ընդունվել, քանի որ առկա պաշտոնեական հրահանգները չեն համապատասխանում գործող կառուցվածքին և հաստիքացուցակին, աշխատանքային պայմանագրերը կազմվել են թերի, չեն ներառել աշխատանքային պարտականությունների նկարագիրը, իսկ հավելումները վճարվել են առանց բավարար հիմնավորումների:

ՓԲԸ-ի աշխատակիցները միաժամանակ հանդիսացել են գրանցված աշխատակիցներ ՓԲԸ-ի կողմից կանոնակարգման ենթակա ոլորտների կազմակերպություններում:

Հաշվետու ժամանակաշրջանում, ՓԲԸ-ի հիմնական աշխատակիցները, միաժամանակ, աշխատել են այնպիսի կազմակերպություններում, որոնց գործունեությունն ուղղակիորեն առնչվել է ՓԲԸ-ի կողմից կանոնակարգման

ենթակա ոլորտների հետ: Այսպես՝ չափագետ Գ. Բ. միաժամանակ աշխատել է «Հայկական էլեկտրացանցեր» ՓԲԸ-ում որպես պահեստապետ, չափագետ Բ. Ո. միաժամանակ աշխատել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Արմավիր Գազմաշ» ՍՊԸ-ում, չափագետ Կ. Դ. աշխատել է «Ստանդարտ դիալոգ» ընկերությունում՝ որպես լաբորատորիայի վարիչ: ՓԲԸ-ի թվով 8 այլ աշխատակիցներ միաժամանակ աշխատել են «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ-ում:

ՉԱԻ դիրքորոշում Ձեր կողմից կազմված արձանագրությունում նշված ընկերության համարելությանը աշխատող 11 աշխատակիցներից 7-ը, որոնք աշխատել են «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության կանոնակարգման ենթակա ոլորտների հետ առնչություն ունեցող ընկերություններում, ազատված են աշխատանքից: Մնացած 4-ին տրված է ժամկետ:

Հաշվեքննողի արձագանք Քանի որ ներկայացված դիրքորոշումը չի առնչվում հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանին, տեղեկատվությունն ընդունվել է ի գիտություն:

**Ծառայությունների մատուցման
թվով 50-ից ավելի պայմանագրեր
կնքվել են առանց դրանց
անհրաժեշտությունը
հիմնավորելու:**

Վերոնշյալից բացի, առանց լրացուցիչ աշխատանքի կատարման անհրաժեշտությունը հիմնավորելու որևէ իրավական հիմքի, 2017-2018թթ. ՓԲԸ-ի և ֆիզիկական անձանց միջև կնքվել է ծառայությունների մատուցման թվով 50-ից ավելի պայմանագրեր, որոնց

հաշվառումը և պահպանումը պատշաճ ձևով չի իրականացվել, այդ իսկ պատճառով ծախսի վերլուծություն չի կատարվել: Միաժամանակ, ոչ պայմանագրերով, ոչ էլ որևէ փաստաթղթերով չի սահմանվել ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը, բովանդակությունը և նկարագիրը, իսկ պայմանագրի կատարման և վճարման հիմք հանդիսացող հանձնման-ընդունման ակտերում պարզապես նշվել է, որ նախատեսված ծառայությունները մատուցվել են պատշաճ որակով և ժամանակին: Այսպես՝ հաստիքացուցակով նախատեսված հաստիքներին զուգահեռ, նույն պարտականությունները կատարելու նպատակով, կնքվել է իրավաբանի, տնօրենի խորհրդականների և «տնտեսագիտության ոլորտում» տնօրենի խորհրդականի հետ ծառայությունների մատուցման պայմանագրեր: Վերջինս, որը հետագայում պետք է իրականացներ նաև ֆինանսա-տնտեսագիտական ոլորտի անալիզ, միաժամանակ, աշխատել է նաև նախարարությունում՝ որպես նախարարի իրավախորհրդատու: Վերոնշյալ թվով չորս անձանց վճարվել է 1,911.0 հազ. դրամ:

ՉԱԻ դիրքորոշում Պայմանագրերի հիման վրա վճարովի ծառայությունների ձեռք բերման նպատակահարմարության քննարկման արդյունքում 2019թ-ի հուլիս ամսից նման բոլոր պայմանագրերի գործողությունը դադարեցվել է:

Հաշվեքննողի արձագանք Քանի որ ներկայացված դիրքորոշումը չի առնչվում հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանին, տեղեկատվությունն ընդունվել է ի գիտություն:

**Վերանորոգման աշխատանքներ
կատարելու նպատակով կնքվել է 1,308. 3
հազ. դրամի ծառայությունների
մատուցման պայմանագիր՝ չպահպանելով
գնումների ոլորտը կարգավորող ՀՀ
օրենսդրության պահանջները:**

Երևան քաղաքի Կոմիտաս փողոցի
49/2 շենքի, 1-ին հարկի երկու
սենյակների վերանորոգման
աշխատանքները կատարելու
նպատակով երկու ֆիզիկական
անձանց հետ կնքվել է
ծառայությունների մատուցման
պայմանագիր, որը ստորագրվել է

նրանցից միայն մեկի կողմից, իսկ որպես պայմանագրի կատարման արդյունք,
վճարումը կատարվել է երկու ֆիզիկական անձանց միաժամանակ: Պայմանագրով
ծառայության գինը սահմանվել է 920.0 հազ. դրամ՝ առանց հարկերի և տուրքերի, իսկ
փաստացի վճարումը կազմել 1,308. 3 հազ. դրամ (ներառյալ հարկերը և տուրքերը):

Չի պահպանվել ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 23-
րդ կետի 16-րդ ենթակետի պահանջները՝ ծառայության ձեռքբերումը ՓԲԸ-ի գնումների
պլանում չի արտացոլվել: Չի պահպանվել նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-21-
Ն) 22-րդ և 23-րդ հոդվածների պահանջները և 1,308. 3 հազ. դրամի գնումը կատարվել
է փաստացի շրջանցելով գնումների ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության
պարտադիր պահանջները:

➤ **Ֆինանսատնտեսական գործունեություն**

ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալը 31.12.2018թ. դրությամբ կազմել է 299,718.0
հազ. դրամ՝ 99 906 հատ հասարակ (սովորական) անվանական ոչ փաստաթղթային
բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝ 3000 դրամ: Բոլոր
բաժնետոմսերը տեղաբաշխվել են և սեփականության իրավունքով պատկանում են
Հայաստանի Հանրապետությանը:

ՓԲԸ-ի 2017-2018թթ. եկամուտների, ինչպես նաև ծախսերի կանխատեսման և
պլանավորման ժամանակ հաշվի չեն առնվել որոշ եկամտային և ծախսային
ուղղություններ, ինչպես օրինակ՝ վարձակալությունից եկամուտը, գույքահարկի գծով
կատարված ծախսերը և այլն, ինչի հետևանքով հնարավոր չի եղել տալ եկամուտների,
ինչպես նաև ծախսերի կանխատեսման, պլանավորման և կատարման վերաբերյալ
արժանահավատ գնահատական:

Ֆինանսատնտեսական գործունեության էական ցուցանիշներն արտացոլված են
աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 (հազ. դրամ)							
		2017 թվական			2018 թվական		
		Կանխատեսում	Փաստացի	Կատարման տոկոսը	Կանխատեսում	Փաստացի	Կատարման տոկոսը
1	Ընդամենը եկամուտներ, որից	573,300.0	605,686.0	105.6%	584,180.0	573,582.0	98%
1.1	Ստուգաչափում, պետական փորձարկումներ	520,000.0	504,565.0	97.0%	535,880.0	502,877.0	94%
2	Ընդամենը ծախսեր, որից	526,700.0	602,875.0	114.5%	555,500.0	560,639.0	101%
2.1	Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	361,000.0	362,306.0	100.4%	364,510.0	341,383.0	94%
2.2	Գործուղման ծախսեր, որից	50,000.0	57,376.0	114.8%	60,000.0	45,704.0	76%
2.2.1	Գործուղման ծախսեր հանրապետության ներսում՝ հայրապրուների հաշվին	41,500.0	47,351.0	114.1%	50,000.0	38,705.0	77%
2.2.2	Արտերկրյա գործուղումներ	8,500.0	10,025.0	117.9%	10,000.0	6,999.0	70%
2.3	Տնտեսական, գրենական, լաբորատոր նյութեր և ապրանքներ	22,000.0	19,591.0	89.1%	18,000.0	14,936.0	83%
2.4	Կապ, ինտերնետ, փոստային ծախսեր	6,000.0	6,510.0	108.5%	6,000.0	5,184.0	86%
2.5	Էներգիա, գազ, կոմունալ ծախսեր	19,500.0	18,510.0	94.9%	20,000.0	13,715.0	69%
2.6	Մաշվածություն	10,000.0	21,338.0	213.4%	10,000.0	80,336.0	803%
2.7	Տրանսպորտի պահպանման ծախսեր, վառելիք	13,900.0	13,808.0	99.3%	13,000.0	14,211.0	109%
2.8	Ներկայացուցչական ծախսեր	3,500.0	5,049.0	144.3%	6,000.0	2,038.0	34%
2.9	Այլ ծախսեր	10,000.0	21,480.0	214.8%	10,000.0	21,069.0	211%
2.10	Հիմնական միջոցների և պաշարների վաճառքների ծախսեր		35,590.0				
2.11	Այլ ոչ գործառնական գործունեություն		13,693.0			4,366.0	
2.12	Շահութահարկի գծով ծախս		4,848.0			9,239.0	

ՓԲԸ-ի ծախսերի շուրջ 60%-ը բաժին է ընկել աշխատավարձին և դրան հավասարեցված վճարներին: Մի շարք ծախսային ուղղությունների գծով փաստացի ծախսերը 2017թ. շուրջ 81,839.0 հազ. դրամ, իսկ 2018թ. շուրջ 96,221.0 հազ. դրամ գերազանցել են հաստատված նախահաշվով նախատեսված գումարները: Կատարված ծախսերի հիմնավորման վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, գրավոր հիմնավորումները բացակայել են:

2017-2018թթ. ներքին գործուղումների նպատակով 86.056.0 հազ. դրամի ծախսը կատարվել է չպահպանելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշման պահանջները:

Ներքին գործուղումների նպատակով կատարված ծախսերի փոխհատուցման ժամանակ ՓԲԸ-ի կողմից չի պահպանվել ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշման պահանջները, իսկ գործուղման յուրաքանչյուր օրվա համար աշխատակցին կատարվել է 12.0 հազ. դրամի վճարում: Ներքին գործուղումների համար 2017թ. բացակայել է

գործուղման հաշվետվությունները:

ՉԱԻ դիրքորոշում Ներքին գործուղման ծախսերի վերաբերյալ նշենք, որ համաձայն «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի 3-րդ կետի՝ Պարվիրատու հանդես եկող տնտեսավարող սուբյեկտը փոխհատուցում է չափագիտական աշխատանքներ կատարողին չափագիտական աշխատանքների հետ կապված աշխատակիցների գործուղման, ստուգաչափման միջոցների՝ մինչև աշխատանքների կատարման վայրը փոխադրման ծախսերը: ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշման 21-րդ հոդվածի պահանջները վերաբերվում են Պետական և համայնքի բյուջեների միջոցներից հատկացվող օրապահիկի ծախսերին, որը Ընկերության աշխատակիցների գործուղման հարաբերությունների նկատմամբ կիրառելի չէ: Ընկերության աշխատակիցների գործուղման ծախսերը կարգավորվում են ՀՀ հարկային օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործուղման դեպքում՝ գործուղվողի՝ գործուղման մեջ գտնվելու յուրաքանչյուր օրացուցային օրվա համար օրապահիկի գծով ծախսը 12 հազար դրամ է:

Հաշվեքննողի արձագանք Չի ընդունվել, քանի որ ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշման պահանջները վերաբերվում են նաև 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ կազմակերպություններին:

Ներկայացուցչական ծախսերի ուսումնասիրությունից պարզվել է, որ կատարվել է 200.0 հազ. դրամի ոչ ներկայացուցչական բնույթի ծախս՝ 13.12.2018թ. ՓԲԸ-ի կողմից ձեռք է բերվել նվեր քարտեր (1 հատ 50.0 հազ. դրամ և 5 հատ 30.0 հազ. դրամ):

Ներկայացուցչական ծախսերով 2017թ. դեկտեմբերին 220 անձի համար նոր տարվա կապակցությամբ կազմակերպված միջոցառման համար վճարվել է 2,640.0 հազ. դրամ: Ծառայության ձեռքբերումն իրականացվել է մեկ անձից գնում ընթացակարգի կիրառմամբ՝ չպահպանելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 23-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները:

Փաստացի այլ ծախսերի մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմել անավարտ արտադրանքի իրացումից (11,223.0 հազ. դրամ), վարկերի և փոխառությունների գծով (5,816.0 հազ. դրամ), արտարժույթային գործընկերների, վարկի, հաշիվների վերագնահատման (1,865.0 հազ. դրամ), հայկական ծրագրեր համակարգի սպասարկման (1,107.0 հազ. դրամ), գնումների համակարգողի ծառայության (1,420.0 հազ. դրամ), մասնակի լուծարված հիմնական միջոցի մաշվածության (1,215.0 հազ. դրամ), վաճառքների գծով դեբիտորական պարտքերի կորուստների գծով (636.0 հազ. դրամ) կատարված ծախսերը:

**31.12.2018թ. դրությամբ
կուտակված 58,381.0 հազ. դրամի
դեբիտորական պարտքի
հավաքագրման ուղղությամբ որևէ
միջոցառում չի ձեռնարկվել:**

ՓԲԸ-ի դեբիտորական պարտքը 31.12.2018թ. դրությամբ կազմել է 58,381.0 հազ. դրամ, որը գոյացել է թվով 348 կազմակերպություններից, սկսած 2014 թվականից: Հաշվետու ժամանակաշրջանում պարտքերը հավաքագրելու ուղղությամբ որևէ միջոցառում չի ձեռնարկվել:

ՉԱԻ դիրքորոշում Ինչ վերաբերվում է Ընկերության դեբիտորական պարտքերին, ապա դրանք համարվում են ընթացիկ, քանի որ համաձայն Ընկերության և տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված պայմանագրերի՝ կատարված ստուգաչափման աշխատանքները ամփոփվում են ամսվա վերջին աշխատանքային օրվա դրությամբ՝ այս դեպքում 31.12.2018թ., ընդունման-հանձնման ակտով և հաշիվ-ապրանքագրով: Հետևաբար, դեբիտորական պարտքերը սկսել են մարվել հաջորդ տարվա առաջին ամսին, իսկ հավաքագրման նպատակով համապատասխան սուբյեկտների հետ պարբերաբար միջոցառումներ իրականացվում են:

Հաշվեքննողի արձագանք Չի ընդունվել, քանի որ նշված դեբիտորական պարտքի ցուցանիշը աճողական է և պարտքերի զգալի մասը ձևավորվել է նախորդ տարիներին՝ սկսած 2014 թվականից:

ՓԲԸ-ն 2017-2018թթ. դրամարկղից կատարել է 148,283.0 հազ.դրամի (այդ թվում՝ 2017թ. 107,893.0 հազ. դրամ, 2018թ. 40,391.0 հազ.դրամ) կանխիկ գործառնություններ: Կանխիկ գործառնությունների հաշվին վճարվել է աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ (2017թ. շուրջ 24,997.0 հազ.դրամ, 2018թ. շուրջ 13,644.0

**2017-2018թթ. ներգրավված վարկերից
և փոխառություններից մուտքերը
կազմել է 260,755.0 հազ. դրամ, որի
դիմաց վճարված տոկոսագումարը՝
7,808.0 հազ.դրամ:**

հազ.դրամ), գործուղում (2017թ. շուրջ 20,149.0 հազ.դրամ, 2018թ. շուրջ 3,924.0 հազ.դրամ), ձեռք է բերվել նաև նյութական արժեքներ: ՓԲԸ-ի կողմից 2017թ. չի պահպանվել 26.12.2002թ. «Դրամարկղային գործառնությունների մասին» օրենքի (ՀՕ-501-Ն) պահանջները, մասնավորապես՝

կանխիկ դրամով ձեռքբերումների նկատմամբ սահմանափակումները:

Համաձայն դրամական հոսքերի մասին հաշվետվության՝ 2017թ. ստացված վարկերից և փոխառություններից մուտքերը կազմել են 125,027.0 հազ. դրամ, որից 6,027.0 հազ. դրամը եղել է արտարժույթով, իսկ 2018թ.՝ 135,728.0 հազ. դրամ: Վարկերն ու

փոխառությունները հիմնականում օգտագործվել են աշխատավարձի գծով առաջացած պարտքերը մարելու նպատակով: Ստացված վարկերի համար վճարված տոկոսագումարները 2017-2018թթ. կազմել է համապատասխանաբար՝ 5,816.0 հազ. դրամ և 1,992.0 հազ. դրամ:

Ծախսերի ուսումնասիրությունից պարզվել է, որ ՓԲԸ-ն հաշվետու ժամանակաշրջանում կատարել է կանոնադրական պարտականությունների կատարման հետ առնչություն չունեցող 761.6 հազ. դրամի ծախս: Այսպես՝ ճանապարհային ուստիկանության կողմից երթևեկության կանոնների խախտումների համար 2017-2018թթ վճարել է 528.8 հազ.դրամ (2017թ. 353.3 հազ.դրամ, 2018թ. 175.5 հազ.դրամ), աշխատողների բանկային քարտերի սպասարկման ամսական վարձավճարների համար՝ 232.8 հազ.դրամ (այդ թվում 2017թ.՝ 172,0 հազ.դրամ, 2018թ.՝ 60,8 հազ.դրամ) և այլն:

Հաշվետու ժամանակահատվածում ՓԲԸ-ն ունեցել է նաև վարձակալության տրված տարածք՝ տասը տարի ժամկետով, որի վարձակալի հետ ՓԲԸ-ն ունեցել է համատեղ լաբորատորիա (պայմանագիրը գործում է 24.08.2012թ-ից, որով չի սահմանվել համատեղ լաբորատորիայի զբաղեցրած տարածքի մակերեսը): Տարածքի մեկ տարվա վարձակալական ընդհանուր արժեքը կազմել է 2,014.7 հազ. դրամ (պայմանագիրը գործում է 19.12.2013թ-ից): Ուսումնասիրությամբ պարզվել է, որ տրված տարածքի փաստացի մակերեսը պայմանագրով սահմանվածից 324.0 քմ-ով ավելի է, որի յուրաքանչյուր տարվա վարձակալական արժեքը, նույն պայմանների դեպքում, ճշգրտված հաշվարկով, կկազմեր 4,821.0 հազ. դրամ: Վարձակալի կոմունալ վճարումները կատարվել են ՓԲԸ-ի կողմից:

ՓԲԸ-ի կողմից 2017-2018թթ. սպառված բնական գազի և էլեկտրաէներգիայի դիմաց ծախսը կազմել է 30,720.3 հազ. դրամ, որն ըստ հարկաբաժինների համամասնորեն բաշխելու դեպքում, կստացվի շուրջ 3,630.0 հազ. դրամը կամ 11.8%-ը բաժին է ընկել վարձակալին (հաշվարկի հիմքում ընկած է ՓԲԸ-ի մեկ հարկաբաժնի համար կատարված ծախսի չափը): Վարձակալի կողմից 2017-2018թթ. սպառած բնական գազի և էլեկտրաէներգիայի դիմաց կատարված ծախսերը կազմել են վարձակալական արժեքի շուրջ 90%-ը, ավելին՝ փաստացի 459.4 քմ տարածքի վարձակալության համար 2 տարվա արդյունքներով ՓԲԸ-ն ստացել է ընդամենը 399.4 հազ. դրամի շահույթ:

ՉԱԻ դիրքորոշում Ընկերությունում իրականացված գույքագրման ընթացքում՝ 2019 թվականի հուլիս ամսին, է պարզվել, որ ընկերությանը պատկանող, ք.Երևան, Կոմիտասի պողոտա 49/4 հասցեում գտնվող անշարժ գույքից «Ստանդարտ Դիալոգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից վարձակալական հիմունքներով փաստացի օգտագործող տարածքն ավելի մեծ է, քան նշված է կողմերի միջև 2013 թվականի դեկտեմբերի 19-ին կնքված վարձակալության պայմանագրով: Այդ խնդրի լուծման նպատակով պատվիրվել է վարձակալության շուկայական գնի գնահատում, ստացվել է հաշվետվությունը, որն ուղարկվել է նշված ընկերությանը՝ վարձակալության նոր պայմանագրի պայմանների քննարկման համար: Ընդ որում՝ նշվել է, որ այդ վարձավճարի գումարը չի ներառում կոմունալ ծախսերը, որոնց հետ կապված պետք է լրացուցիչ վճարումներ կատարվեն:

Հաշվեքննողի արձագանք Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել նաև նախորդ տարիներին փաստացի

գրադեցրած և չվճարված տարածքի գումարների ու առաջացած կոմունալ վճարների հաշվարկման և գանձման ուղղությամբ: Ընդունվել է ի գիտություն:

ՓԲԸ-ն իր տարածքային կենտրոնների տեղակայման համար վարձակալել է տարածքներ Կապանում, Վանաձորում և Գյումրիում: Հաշվետու ժամանակաշրջանում վճարված գումարը կազմել է 3,040.3 հազ. դրամ:

Ֆինանսական հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզվել է, որ 2017թ. թվով 4 հատ թվային բուսուլի վաճառքից գոյացել է շուրջ 10,000.0 հազ. դրամի հասույթ (առանց ԱԱՀ-ի), մինչդեռ տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2017-2018թթ. չափիչ սարքերի և դրանց պահեստամասերի վաճառք չի իրականացվել, դրանից եկամուտ չի գոյացել:

ՉԱԻ դիրքորոշում Թվային բուսուլների վաճառքի վերաբերյալ նշենք, որ ԹԻՎ ՄԱՊՁԲ-22-3 առ 16.06.2010թ. պայմանագիրը կնքվել է «Երևանի օպտիկա-ֆիզիկական չափումների գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնեկրթական ընկերության հետ, որի իրավահաջորդն է հանդիսացել «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնեկրթական ընկերությունը (<< կառավարության որոշում N 10-Ա առ 12.01.2012թ.), իսկ 2017թ. ընդամենը կատարվել է բուսուլների հանձնման մասով ընկերության պարտավորությունը: Նման պայմաններում 2017 թվականին չէր կարող վաճառք տեղի ունեցած լինել և եկամուտ գոյանար:

Հաշվեքննողի արձագանք Չի ընդունվել, քանի որ 2017թ. հաստատված ֆինանսական հաշվետվությունում արտացոլվել է 10,000.0 հազ. դրամի հասույթ, որը գոյացել է թվային բուսուլի վաճառքից:

➤ Գնումների ընթացակարգեր և կնքված պայմանագրեր

ՓԲԸ-ն իր կարիքների համար 2017-2018թթ. յուրաքանչյուր տարի կազմակերպել է թվով 7 գնման ընթացակարգ: Կազմակերպված ընթացակարգերի մասին տեղեկատվությունը արտացոլված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2
հազ.դրամ

Ընտրված մասնակից	Գնման ընթացակարգ	Գնման առարկայի անվանում	Պայմանագրի ընդհանուր գումարը
2017 թվական			
Սիփիէս Օիլ Քորփորեյշն ՍՊԸ	Գնանշման հարցում	բենզին, ռեզույվար	3,500.0
Սիփիէս Օիլ Քորփորեյշն ՍՊԸ	Գնանշման հարցում	բենզին, ռեզույվար	1,500.0
Ալֆա թրեյդ ՍՊԸ	Գնանշման հարցում	չափման սարքեր	3,450.0
Ֆլեշ ՍՊԸ	Հրատապ բաց մրցույթ	բենզին, ռեզույվար	410.7
Ֆլեշ ՍՊԸ	Հրատապ բաց մրցույթ	բենզին, պրեմիում	1,988.0
Թասկ ՍՊԸ	Էլեկտրոնային աճուրդ	թվային տպագրության ծառայություններ	10,500.0
Ա/Ձ Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի	Գնանշման հարցում	շինարարական աշխատանքներ	2,470.0
Ընդամենը			23,818.6
2018 թվական			
Սիփիէս Օիլ Քորփորեյշն	Գնանշման հարցում	բենզին	6,350.0

ՍՊԸ			
Սիփիէս Օիլ Քորփորեյշն ՍՊԸ	Գնանշման հարցում	Բենզին ռեգուլյար	3,200.0
Թասկ ՍՊԸ	Հրատապ մեկ անձ	տպագրական աշխատանքներ	1,620.0
Ռուսենֆո Էքսպորտ ՍՊԸ	Գնանշման հարցում	Բենզին ռեգուլյար	3,225.0
Բիզնես Քոնսալթ ՓԲԸ	Գնանշման հարցում	Հաշվապահական հաշվառման ծառայությունների	21,080.0
Թասկ ՍՊԸ	Հրատապ մեկ անձ	Պատվերով տպագրվող նյութեր	1,284.0
Մաքս Օիլ ՍՊԸ	Գնանշման հարցում	բենզին ռեգուլյար	1,809.0
Ընդամենը			38,568.0

Հաշվապահական հաշվառման ծառայությունների ձեռքբերման մրցույթը իրականացվել է և հակամրցակցային դրսևորումներով:

Հաշվապահական հաշվառման ծառայությունների ձեռքբերման մրցույթի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի համաձայն, պայմանագիր կնքելու համար նախապայման է սահմանվել նախորդ երեք տարիների ընթացքում չափագիտական

ոլորտում հաշվապահական և հարակից ծառայությունների մատուցման փորձը: Հաշվի առնելով այն, որ ՓԲԸ-ն հանդիսանում է ազգային մարմին և ոլորտի միակ կազմակերպությունը, նման փորձ հնարավոր մասնակիցը կարող էր ունենալ միայն ՓԲԸ-ի հետ աշխատելու արդյունքում: Մրցույթի հայտարարման պահին նման փորձ ունեցել է միայն մեկ ընկերություն՝ «Բիզնես քոնսալթինգ» ՍՊԸ-ն, որը ՓԲԸ-ի հետ 10.11.2017թ. մեկ անձից գնման ընթացակարգի միջոցով կնքել էր 980.0 հազ. դրամի ֆինանսական խորհրդատվական ծառայությունների գնման պայմանագիր:

Հաշվապահական հաշվառման ծառայությունների ձեռքբերման մրցույթը հայտարարվել է երեք տարվա համար, որը առաջացրել է մասնակցության մի շարք սահմանափակումներ: Մասնավորապես, համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 61-րդ կետի՝ «մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է բավարար, եթե մասնակիցը հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման պայմանագրեր, որոնց ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի գինը պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նույն որոշման 67-րդ կետի համաձայն՝ մասնակիցներին ներկայացվող «ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է բավարար, եթե մասնակցի երեք

հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից: Մրցույթը 3 տարվա համար կազմակերպելու արդյունքում, որպես նախահաշվային գին է սահմանվել 52,700.0 հազ. դրամը, ինչը նշանակում է, որ մրցույթին մասնակցության հայտ կարող են ներկայացնել միայն այն կազմակերպությունները, որոնք նախկինում ունեցել են 26,350.0 հազ. դրամը գերազանցող կնքված պայմանագրեր, իսկ 3 տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չպետք է լինի 52,700.0 հազ. դրամից: Ավելին, վերոնշյալ ծառայության ձեռքբերման տեխնիկական բնութագրով սահմանվել է նաև, որ հայտ ներկայացնող ընկերությունը պետք է ունենա միջազգային ճանաչում (լինի հաշվապահական ընկերությունների աշխարհի տասը խոշորագույն միջազգային ցանցերից մեկի անկախ անդամ), ընկերության աշխատակիցը պետք է ունենա նաև միջազգային հաշվապահական որակավորում: Սահմանված պահանջներից առաջինը ոչ միայն հակասում է գնումների ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին, այլև զուրկ է տրամաբանական հիմքերից, իսկ ինչ վերաբերում է երկրորդ պահանջին, վերջինս, նույնպես, չի հիմնավորվել, քանի որ ՓԲԸ-ն իր կանոնադրական գործառույթներն իրականացնելիս հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների հետ չի առնչվել, դրանց համապատասխան հաշվետվություններ չի կազմել և այլն:

Վերոնշյալ բոլոր հանգամանքները, ըստ երևույթի, խոչընդոտել են մրցույթի մասնակցության հնարավորությունները և հակասել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին: Արդյունքում մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել միայն մեկ ընկերություն՝ «Բիզնես քոնսալթինգ» ՍՊԸ-ն, որի գնային առաջարկը եղել է նախահաշվային գնին հավասար, ճանաչվել է հաղթող և կնքվել է պայմանագիր:

Շրջանցելով գնումների ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջները, առանց մրցույթի հայտարարման, որոշ դեպքերում միայն ՀԴՄ կտրոններով ձեռք է բերվել 4,409.0 հազ. դրամի բեռնգին:

Ձևաթղթերի (վկայագիր, վկայական, դրոշմանիշ և այլն) հիմնական մասի տպագրությունը 2017թ. կազմակերպվել է գնանշման հարցման միջոցով՝ որպես տպագրական աշխատանքների ձեռքբերում, սակայն նույն ժամանակահատվածում, վերոնշյալ ձևաթղթերի գնման մի մասի ձեռքբերումն էլ՝ 951.8 հազ. դրամի

չափով, գնումների պլանում ձևակերպվել է իբրև ծառայություն և իրականացվել է մեկ անձից գնում կատարելու միջոցով, այդպիսով խուսափելով մրցույթ հայտարարելուց:

Ավելին, 2017թ. փետրվարին, գնումների միասնական անվանացանկի նույն ապրանքախմբում գտնվող բուկլետի, թղթապանակի և նոթատետրի տպագրման համար ՓԲԸ-ն քաղաքացի Վ. Հ.-ի հետ կնքել է 180.0 հազ. դրամի քաղ. իրավական պայմանագիր, և փաստացի ծառայությունները ձեռք բերել առանց որևէ մրցույթի

կազմակերպման՝ շրջանցելով գնումների ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջները:

Նույն պատկերն է արձանագրվել նաև վառելիքի ձեռքբերման գործընթացում: Շրջանցելով գնումների ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջները, 2017թ. ՓԲԸ-ն, առանց մրցույթի հայտարարման, որոշ դեպքերում միայն ՀԴՄ կտրոններով ձեռք է բերել 4,409.0 հազ. դրամի բենզին: Ավելին, մեկ այլ դեպքում, ՓԲԸ-ի աշխատակից Լ. Հ.-ի բանկային հաշվին, վառելիքի ձեռք բերման նպատակով, փոխանցվել է 2,534.0 հազ. դրամ, իսկ ձեռք բերված վառելիքը պահեստ մուտք չի եղել:

ՉԱԻ դիրքորոշում ՉԱԻ ՓԲ ընկերության Ջանգվածի, ծավալի և անկյունագծային չափումների բաժնի կողմից (նախկինում Ջանգվածի, տեխնիկական սպասարկման բաժին) ստուգաչափման և վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար ՋԻԼ-130ՎԼ-2 լաբորատորիան, որի մեջ են գտնվում 6 տոննա զանգվածով էտալոնային կշռաքարերը, 2017թ. ծախսել է 12406 լիտր բենզին՝ (գումարը կազմել է 4472000 դրամ): 2017թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին 9486 լիտր բենզինը ձեռք է բերվել վաճառակերպերից (բենզալցակայաններում) և ՀԴՄ կտրոնները երթուղային ուղեգրերի հետ միասին ներկայացվել է կազմակերպության հաշվապահություն: Մինչև 2017 թվականի հոկտեմբեր ամիսը ՀԴՄ կտրոններով ձեռք բերված վառելիքը հաշվապահորեն, որպես ծախս ձևակերպվել է անմիջականորեն՝ առանց պահեստի մուտք և ելք ձևակերպելու: Մնացած 2920 լիտր բենզինի կտրոն տրամադրվել է պահեստից: 2017թ. հոկտեմբեր ամսից սկսած վառելիքի մուտքը պահեստ հաշվապահորեն ձևակերպվել է համաձայն հաշիվ ապրանքագրի, իսկ ելքը՝ համաձայն ներկայացված պահանջագրի:

Ընդհանուր առմամբ 12406 լիտր վառելիքի գումարային ծախսերը, որպես տրանսպորտային ծախս ամբողջովին ներառվել են պատվիրատուների հաշիվ հայտերում ներկայացված կատարված աշխատանքների դիմաց վճարման ենթակա գումարի մեջ, իսկ քանակական ծախսը համապատասխանում է երթուղային ուղեգրերում ներկայացված ավտոմեքենայի կատարած վազքին՝ համաձայն ՀՀ կառավարության Վառելիքի ծախսի վերաբերյալ №1001-Ն առ 01.06.2005թ. որոշման նորմերի, ներառյալ՝ կշռաքարերով վազքը և տելֆերի աշխատանքը):

Հաշվեքննողի արձագանք Չի ընդունվել, քանի որ չի պահպանվել ինչպես գնումների կազմակերպման, այնպես էլ հաշվապահական հաշվառման վարմանը ՀՀ օրենսդրությամբ ներկայացվող պահանջները:

Միաժամանակ, 22.01.2018թ. ՓԲԸ-ի կողմից Թասկ ՍՊԸ-ից ստուգաչափման վկայականների, ծանուցագրերի, ինքնակաշուն և ռետինե դրոշմակնիքների, բլանկների և սերտիֆիկատների դիզայնի համար ձեռք է բերվել ծառայություններ՝ 480.0 հազ. դրամի չափով, այն դեպքում, երբ նշված ձևաթղթերի դիզայնի մեջ բովանդակային փոփոխություն տեղի չի ունեցել, իսկ նշված ձևաթղթերի ձեռքբերման համար հայտարարված մրցույթների տեխնիկական բնութագրերում պատվիրատուի կողմից դիզայնի տրամադրման փաստի մասին նշում չի էլ արվել:

Մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի կիրառմամբ իրականացված բոլոր գնումների դեպքում չի պահպանվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 110-րդ կետի պահանջները, պայմանագրերը կամ դրանց փոխարինող փաստաթղթերը, հաշիվ ապրանքագրերը, չեն մուտքագրվել էլեկտրոնային գնումների համակարգ, հանձնման ընդունման գործընթացը չի իրականացվել համակարգի միջոցով:

2017-2018թթ. արդյունքներով չի պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-21-Ն) 9-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները՝ սահմանված ժամկետներում չեն կազմվել և չեն հրապարակվել գնումների գործընթացի մասին հաշվետվությունները:

➤ Օրենսդրական չափագիտություն

Օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ կառավարության սահմանած չափման միջոցները ենթակա են ստուգաչափման, իսկ օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չստուգաչափված չափման միջոցների շահագործումն արգելվում է:

Օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ ՀՀ կառավարության 11.02.2016թ. թիվ 113-Ն որոշմամբ սահմանվել է օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների ցանկը, որտեղ Օրենքով սահմանված բնագավառներից չի ներառվել ռազմական բնագավառը:

Օրենսդրական չափագիտության շրջանակներում ՓԲԸ-ի կողմից 2017թ. թվով 325 513, 2018թ. թվով 357 822 հատ չափման միջոցի ստուգաչափման արդյունքները եղել են դրական, իսկ 2017թ. թվով 79, իսկ 2018թ. թվով 137 հատը՝ բացասական:

Հաշվետու ժամանակահատվածում ստուգաչափված չափման միջոցների շուրջ 95%-ը բաժին է ընկել էլեկտրական էներգիայի (43%), բնական գազի (40%) և ջրի հաշվիչների (12%) ստուգաչափմանը:

Օրենքի 14-րդ հոդվածի համաձայն օրենսդրական չափագիտության գործառույթներն են՝

- չափման միջոցների տեսակի հաստատումը,
- չափման միջոցների ստուգաչափումը,
- չափման միջոցների չափագիտական փորձաքննությունը,
- չափագիտական հսկողությունը:

Չափման միջոցների տեսակի հաստատումը

Համաձայն Օրենքի 15-րդ հոդվածի և ՀՀ էկոնոմիկայի նախարարի 21.12.2012թ. թիվ 1060-Ն հրամանի՝ օրենսդրական չափագիտության տարածման ոլորտում կիրառվող և ՀՀ կառավարության սահմանած չափման միջոցները ենթակա են տեսակի հաստատման և կիրառման թույլատրվում են այն չափման միջոցները, որոնք անցել են փորձարկումներ, տեսակը հաստատվել է և գրանցվել են չափման միջոցների գրանցամատյանում, ինչը ենթադրում է, որ օրենսդրական չափագիտության տարածման

ոլորտում կիրառվող բոլոր չափման միջոցները՝ թե ներմուծված, թե արտադրված ՀՀ տարածքում, պարտադիր ենթակա են տեսակի հաստատման: Տեսակի հաստատման արդյունքում սահմանվում է նաև տվյալ չափման միջոցի հետագա ստուգաչափման պարբերականությունն ու

**Մաքսային մարմինների կողմից
ՀՀ տարածք ներմուծված չափման
միջոցների վերաբերյալ տեղեկա-
տրվությունը չի տրամադրվել:**

մեթոդիկան, ինչից հետևում է, որ ստուգաչափում կարող է իրականացվել միմիայն և բացառապես տեսակը հաստատված չափման միջոցների նկատմամբ:

Միաժամանակ, Օրենքի 18-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21.04.2016թ. թիվ 393-Ն որոշման համաձայն՝ մաքսային մարմինները ՀՀ տարածք ներմուծված չափման միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը սահմանված կարգով պետք է տրամադրեն չափագիտության լիազոր մարմնին, սակայն ՀՀ մաքսային մարմինների կողմից ՀՀ տարածք ներմուծված չափման միջոցների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը վերջին անգամ տրամադրվել է 2014թ. և այնուհետև ընդհատվել է ընդհուպ մինչև 2018թ. վերջին եռամսյակը:

Համաձայն ՀՀ կառավարության 29.01.2016թ. թիվ 60-Ն որոշմամբ հաստատված «Սոցիալական և կենսական կարևոր նշանակություն ունեցող չափման միջոցների շուկայահանման» կարգի 6-րդ կետի՝ ներմուծողը կարող է շուկայահանել արտադրանքը միայն սահմանված ընթացակարգերով չափման միջոցի տեսակի հաստատման և առաջնային ստուգաչափման արդյունքում տրված փաստաթղթերը ստանալուց հետո: Քանի որ չափման միջոցների կիրառման ոլորտը կարգավորող վերոնշյալ օրենսդրական և ենթօրենսդրական ակտերի պահանջների խախտման համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 158-րդ և 188-րդ հոդվածներով նախատեսված է պատասխանատվություն, ՀՀ հաշվեքննիչ պալատը առ 20.05.2019թ. ՀՊԵ-ԿԿ-74 գրությամբ առաջարկել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեին՝ քննարկման առարկա դարձնել «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 15-րդ

Տնտեսվարող սուբյեկտների գերակշիռ մասը չի իրականացրել չափման միջոցի տեսակի հաստատում:

Ներկայացված հայտերի հիման վրա, իսկ տնտեսվարող սուբյեկտների գերակշիռ մասը չի իրականացրել չափման միջոցի տեսակի հաստատում:

Տեսակի հաստատման հայտերի ընդունման կամ մերժման գրանցամատյան չի վարվել:

Չափման միջոցի տեսակի հաստատման համար 2017թ. ՓԲԸ-ն ստացել է թվով 409 հայտ, 2018թ.՝ թվով 344 հայտ: Հայտերով որպես չափման միջոց ներկայացված սարք-սարքավորումներից 2017թ. 91 հատը, իսկ 2018թ. 117 հատը չի հանդիսացել չափման միջոց, հետևաբար ենթակա չի եղել տեսակի հաստատման: Հայտերի հիման վրա 2017թ. տրամադրվել է 238 հատ տեսակի հաստատման սերտիֆիկատ (վկայագիր) և 99 հատ՝ նախկինում տեսակը հաստատված չափման միջոցների նույնականացման մասին տեղեկանք, իսկ 2018թ. հայտերի հիման վրա տրամադրվել է 150 հատ տեսակի

հաստատման սերտիֆիկատ (վկայագիր) և 89 հատ՝ նախկինում տեսակը հաստատված չափման միջոցների նույնականացման մասին տեղեկանք:

Համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարի 21.12.2012թ. թիվ 1060-Ն հրամանի՝ ՓԲԸ-ն չափման միջոցի տեսակի հաստատման գործընթացում պետք է վարի 2 տեսակի գրանցամատյան՝ տեսակի հաստատման հայտերի գրանցման մատյան (Ձև 8) և ՀՀ-ում կիրառման թույլատրված չափման միջոցի գրանցամատյան (Ձև 7): Հրամանի 15-րդ կետի համաձայն՝ հայտը ներկայացվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, գնահատվում է համապատասխան փաստաթղթերի լրակազմությունը և չափման միջոցի առկայությունը, դրա հիման վրա որոշում է ընդունվում հայտի ընդունման կամ մերժման մասին և համապատասխան լրացում է արվում տեսակի հաստատման հայտերի գրանցման մատյանում: 2017-2018թթ. հաստատված հայտերի ընդունման կամ մերժման գրանցամատյան (Ձև 8) չի վարվել:

2017-2018թթ. չափման միջոցի տեսակի հաստատման մերժման դեպքեր չեն արձանագրվել և ծանուցագրեր չեն տրամադրվել: 31.12.2018թ. դրությամբ չափման միջոցի տեսակի գրանցամատյանում գրանցվել է թվով 915 տեսակի չափման միջոց:

Չափման միջոցների ստուգաչափումը

Չափման միջոցի ստուգաչափումն իրականացվում է այն արտադրողի կողմից սահմանված չափագիտական պահանջներին վերջինիս համապատասխանությունը հավաստելու նպատակով:

Օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա, սակայն չստուգաչափված չափման միջոցների շահագործումն արգելվում է, սակայն իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից կիրառվող չափման միջոցների ստուգաչափում մեծամասամբ չի իրականացվել:

Առևտրի ոլորտում թվով 14 412 կազմակերպություններից ստուգաչափված են եղել թվով 319 տնտեսվարող սուբյեկտների կշեռքները:

Մասնավորապես, համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված տեղեկատվության՝ ՀՀ

տարածքում 2017թ. տարեվերջի դրությամբ գործել է թվով 14 296 խանութ և 2 369 կրպակ, 2018թ. տարեվերջի դրությամբ՝ 14 412 խանութ և 2183 կրպակ: Կշեռքների ստուգաչափում 2017թ. իրականացվել է թվով 175 տնտեսվարող սուբյեկտների մոտ, որի արդյունքներով ստուգաչափվել է ընդհանուր թվով տարբեր տեսակի 795 հատ կշեռք, իսկ 2018թ.՝ 319 տնտեսվարող սուբյեկտների մոտ, իսկ ստուգաչափված կշեռքների թիվը կազմել 1 291 հատ:

Ավտոմոբիլային սակաչափիչների ստուգաչափումների վերաբերյալ տեղեկատվության վերլուծությունից պարզվել է, որ ՓԲԸ-ի կողմից 2017թ. իրականացվել է 2451 ավտոմոբիլային սակաչափիչների ստուգաչափում, 2018թ. դրանց թիվը էապես

նվազել է՝ կազմելով 1321-ը: Ընդ որում, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից հրապարակած տեղեկատվության համաձայն՝ 2018թ. ՀՀ-ում տաքսի վարելու լիցենզիա է ունեցել 92 000 քաղաքացի:

ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված տեղեկատվության համաձայն՝ 2017թ. տարեվերջին ՀՀ տարածքում գործել է թվով 362 գազալցակայան և թվով 486 բենզալցակայան, մինչդեռ նույն տարում պարտադիր ստուգաչափում է անցել թվով 287 գազալցակայան և թվով 153 տնտեսվարող սուբյեկտի թվով 264 նավթամթերքի բաշխիչ աշտարակ:

Ինչ վերաբերում է ճանապարհային երթևեկության վերահսկման և տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակը գնահատելու նպատակով օգտագործվող ստացիոնար (ոչ շարժական) արագաչափերի ստուգաչափմանը, ՀՀ ճանապարհային ոստիկանության կողմից տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 31.12.2018թ. դրությամբ հանրապետության տարածքում փաստացի տեղադրված է թվով 165 արագաչափ, իսկ 2018թ. ստուգաչափված արագաչափերի թիվը կազմել է թվով 183-ը:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն 2017-2018թթ. տեղադրել է 347 379

հատ հաշվիչ, այն դեպքում, երբ նույն ժամանակահատվածում ստուգաչափված հաշվիչների թիվը կազմել է 290 829 հատ (56 550 հատով պակաս):

Ինչ վերաբերում է առողջապահության բնագավառում իրականացված

Հանրապետությունում գործող թվով շուրջ 200 պոլիկլինիկաներից 2017-2018թթ. ստուգաչափման հայտ է ներկայացրել թվով 11-ը:

ստուգաչափումներին, ապա ՀՀ առողջապահության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ թվով 4751 լիցենզավորված կազմակերպություններից 2017-2018թթ. պարտադիր ստուգաչափման ենթակա սարքավորումներ կիրառող հաստատություններից ստուգաչափման հայտ է ներկայացրել շուրջ 146-ը կամ 3.1%-ը: Հանրապետությունում գործող թվով շուրջ 200 պոլիկլինիկաներից 2017-2018թթ. ստուգաչափման հայտ է ներկայացրել թվով 11-ը և այլն:

Օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ չափագիտության ազգային մարմինը չափման միջոցները սահմանված կարգով ստուգաչափման ներկայացնելու համար ծանուցում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին: ՓԲԸ-ն չի ունեցել վերոնշյալ գործառույթն իրականացնելու մշակված կարգ և փաստացի ծանուցումներ չի տրվել:

Ստուգաչափումն իրականացվում է հայտատուի կողմից ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 19.02.2018թ. թիվ 133-Ն հրամանով սահմանված հայտի կամ պայմանագրի հիման վրա:

Հաշվեքննության ընթացքում ստուգաչափման նպատակով ներկայացված հայտերի և պայմանագրերի ուսումնասիրությունից պարզվել է, որ որոշ դեպքերում ներկայացված

հայտերը չեն համապատասխանել 19.02.2018թ. թիվ 133-Ն հրամանի Հավելված 1-ով սահմանված հայտի հաստատված ձևին, ինչպես նաև չեն պահպանվել պայմանագրերով սահմանված պայմանները: Մասնավորապես՝ որոշ դեպքերում պայմանագրով սահմանված հանձնման-ընդունման ակտեր առհասարակ չեն կազմվել, իսկ կատարման ժամկետները և վճարման ժամանակացույցերը չեն պահպանվել: ՓԲԸ-ում վարվող գրանցամատյաններից հնարավոր չի եղել առանձնացնել 2017-2018թթ. ստացված հայտերի և կնքված պայմանագրերի քանակները, քանի որ մի շարք դեպքերում նույն հայտի հիման վրա կնքվել են պայմանագրեր, որոնց վերաբերյալ առանձին հաշվառում չի իրականացվել, ինչի հետևանքով ստացած հայտերով և կնքված պայմանագրերով չափման միջոցների քանակները չեն համապատասխանել փաստացի իրականացված ստուգաչափումների քանակներին, ինչը հնարավորություն չի տվել պայմանագրերի կատարման վերաբերյալ իրականացնել ճշգրիտ ուսումնասիրություն և ստանալ քանակական գնահատականներ:

ՁԱԻ դիրքորոշում Ինչ վերաբերում է այն դիտողությանը, որ որոշ դեպքերում ընկերություն ներկայացված հայտերը չեն համապատասխանում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 19.02.2018թ. №133-Ն հրամանի Հավելված 1-ով սահմանված հայտի հաստատված ձևին, ապա նշենք, որ նույնիսկ բազմիցս իրականացված բացառական աշխատանքներին, ձևանմուշի տրամադրմանը որոշ տնտեսվարողների կողմից շարունակվում են սահմանված կարգի խախտումների թույլ տալ, որի վերացմանն ուղղված միջոցառումները շարունակվում են իրականացվել:

2017-2018թթ. ընթացքում ստացված հայտերի և կնքված պայմանագրերի քանակները առանձնացված չլինելու կապակցությամբ նշենք, որ հայտերի հիման վրա կնքված պայմանագրերի դեպքում շատ հաճախ Պարզիքի կարող է հայտ ներկայացնել իրեն նախընտրելի ժամանակահատվածում ստուգաչափման աշխատանքներ իրականացնելու համար՝ վաղորդք կնքված պայմանագրի հիման վրա: Հնարավոր են դեպքեր, երբ միանգամից կնքվում է ստուգաչափման պայմանագիր՝ հաշվի առնելով նախորդ տարիներից եկած փորձն այդ սուբյեկտի հետ համագործակցությամբ կապակցությամբ: Այդ իսկ պատճառով ստացված հայտերով և կնքված պայմանագրերով չափման միջոցների քանակները չեն համապատասխանում փաստացի իրականացված ստուգաչափումների քանակներին: Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ արդեն իսկ իրականացվում է հայտերի և կնքված պայմանագրերի հիման վրա ներկայացված հայտերի առանձին հաշվառում:

Հաշվեքննողի արձագանք Չի ընդունվել, քանի որ նշված վերացմանն ուղղված միջոցառումները մեկնարկել են հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածից հետո, սակայն տեղեկատվությունն ընդունվել է ի գիտություն:

Ստուգաչափման աշխատանքներ իրականացրած թվով 99 աշխատակիցներից թվով 25-ը չի ունեցել ստուգաչափողի վկայագիր:

Համաձայն Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի՝ սկսած 2012թ-ից չափման միջոցների ստուգաչափում իրականացնող մասնագետները ենթակա են պարտադիր վկայագրման՝ որպես ստուգաչափող: Սակայն չափման միջոցների ստուգաչափողների վկայագրման կարգը ՓԲԸ-ի տնօրենի կողմից հաստատվել է միայն 10.11.2016թ. թիվ 55-Վ հրամանով, որի համաձայն՝

չափման միջոցների ստուգաչափում կարող են իրականացնել միայն գործող վկայագրման թերթիկ ունեցող աշխատակիցները: Ստուգաչափում իրականացնող աշխատակիցների վկայագրման համակարգային միակ գործընթացը կազմակերպվել է 2017թ. հունիս ամսին, որի արդյունքներով 74 աշխատակից ստացել է ստուգաչափողի վկայագիր՝ երեք տարի ժամկետով:

2017-2018թթ. ստուգաչափման աշխատանքներ իրականացրած թվով 99 աշխատակիցներից 25-ը չի ունեցել ստուգաչափողի վկայագիր: Միաժամանակ, ստուգաչափում կատարելու համար ՓԲԸ-ն ծառայությունների մատուցման պայմանագրերով ներգրավել է 4 ֆիզիկական անձանց, որոնք նույնպես չեն ունեցել ստուգաչափողի վկայագրեր: Ավելին, ստուգաչափման ծառայություններ մատուցած երկու անձանց պայմանագրերը անգամ չի կնքվել և երկկողմանի չի ստորագրվել՝ այսինքն՝ ուժի մեջ չեն մտել:

2017-2018թթ. ստուգաչափման և չափագիտական վկայագրման դրական և բացասական արդյունքները վավերացնելու համար օգտագործվել են՝

- վկայական,
- ծանուցագիր,
- վկայագիր,
- բարձր պաշտպանվածության համարակալված ինքնակաչուն դրոշմ,
- ինքնակաչուն տարեկան դրոշմ,
- ինքնակաչուն եռամսյակային դրոշմ,
- պողպատե դրոշմի արտատիպ 8մմ, 6մմ, 3.5մմ
- ռետինե դրոշմի արտատիպ 18մմ:

Հարկ է նշել, որ ինքնակաչուն տարեկան դրոշմ և ինքնակաչուն եռամսյակային դրոշմների մասին որևէ իրավական ակտով չի սահմանվել, ՓԲԸ-ի կողմից ստուգաչափման գործընթացում դրական արդյունքների վավերացման վերոնշյալ միջոցների օգտագործումը կանոնակարգված և հիմնավորված չի եղել: Ինչ վերաբերում է բարձր պաշտպանվածության համարակալված ինքնակաչուն դրոշմի օգտագործմանը, ապա վերջինիս կիրառումը Օրենքով ևս չի սահմանվել, սակայն սահմանվել է ՓԲԸ-ի տնօրենի 02.11.2015թ. թիվ 41-Վ հրամանով, այնուհետև՝ 19.02.2018թ. թիվ 133-Ն հրամանով:

Այսպիսով, ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի 02.11.2015թ. 41-Վ հրամանով սահմանվել է բարձր պաշտպանվածության համարակալված ինքնակաչուն դրոշմի օգտագործման այնպիսի լրացուցիչ պահանջներ, որոնք նախատեսված չեն եղել ոչ Օրենքով և ոչ էլ որևէ իրավական ակտով: Նույնը վերաբերվում է նաև 19.02.2018թ. թիվ 133-Ն հրամանին: Օրենսդրական այս անհամապատասխանություններով պայմանավորված իրականում անհնար է եղել իրականացնել ստուգաչափման արդյունքների վավերացումը՝ առանց օրենսդրական ակտերից որևէ մեկի պահանջների խախտման:

ՉԱԻ դիրքորոշում Բարձր պաշտպանվածության համարակալված ինքնակաշուն դրոշմի օգտագործման լրացուցիչ պահանջների սահմանումը պայմանավորված է եղել ստուգաչափման գործընթացի հետևելիության և հաշվառման գործընթացը վերահսկելի դարձնելու նպատակով, ինչպես նաև դրանց կիրառումը պայմանավորված է եղել չափման միջոցների ստուգաչափման համապատասխան արդյունքները երրորդ կողմին ավելի ակնհայտ դարձնելու, չափման միջոցի ստուգաչափված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ավելի ակնհայտ դարձնելու նպատակով:

Հաշվեքննողի արձագանք Չի ընդունվել, քանի որ ցանկացած դեպքում ստուգաչափման արդյունքները վավերացնող միջոցը պետք է հաստատված լինի համապատասխան ձևով և կիրառվի (տպագրվի, փակցվի ու խտրանվի) սահմանված կարգով՝ խիստ հաշվառման պայմանով:

Ստուգաչափման արդյունքների վավերացման գործընթացը փաստացի կանոնակարգված չի եղել: Կիրառվել են օրենսդրությամբ չսահմանված վավերացման միջոցներ:

Ինչ վերաբերվում է ստուգաչափման արդյունքների վավերացման փաստացի գործընթացին, ապա այն չի համապատասխանել վերոնշյալ իրավական ակտերից որևէ մեկի ամբողջական պահանջներին, վավերացման գործընթացը փաստացի

կանոնակարգված չի եղել, իսկ ստուգաչափման արդյունքների վավերացումը իրականացվել է «արատավոր պրակտիկայի» ավանդույթով եկած մոտեցումներով: Մասնավորապես, ՓԲԸ-ն, առանց համապատասխան իրավունքի մշակել, տպել ու օգտագործել է ինքնակաշուն՝ տարեկան և եռամսյակային դրոշմներ, որոնց գոյության մասին, ինչպես նաև կիրառման վերաբերյալ որևէ իրավական փաստաթուղթ առկա չի եղել, հետևաբար ստուգաչափման վավերացման ժամանակ նշված դրոշմներն օգտագործելը ևս իրավաչափ չի եղել, և չի համապատասխանել չափագիտության ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին:

Գործող օրենսդրության համաձայն չափման միջոցների ստուգաչափման, չափագիտական վկայագրման դրական արդյունքները վավերացվում են վկայականով: Հիմք ընդունելով 14.02.2013թ. թիվ 104-Ն նախարարի հրամանը՝ 2017թ. տրամադրվել է թվով 170 հատ, իսկ 2018թ.՝ թվով 20 հատ վկայագիր՝ չափականելով Օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

Չեն պահպանվել ստուգաչափման արձանագրությունները, իսկ դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը պաշտոնական կայքում չի հրապարակվել:

Չի պահպանվել նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարի 14.02.2013թ. թիվ 104-Ն հրամանի 18-րդ և 19-րդ կետերի, ինչպես նաև 19.02.2018թ. թիվ 133-Ն հրամանի 23-րդ կետի պահանջները, ինչի հետևանքով ՓԲԸ-ի կողմից 2017թ. չի կազմվել ստուգաչափման գրաֆիկները, իսկ 2018թ. մարտից՝ նախատեսված ստուգաչափման արձանագրությունները:

19.02.2018թ. թիվ 133-Ն հրամանի 31-րդ կետի համաձայն՝ չափման միջոցի ստուգաչափման վկայականի ժամկետի մեջ լինելու ժամանակահատվածում ստուգաչափման արդյունքների վերաբերյալ արձանագրությունները և ստուգաչափման վկայականի պատճենները ՓԲԸ-ի կողմից պետք է պահպանվեին, ինչը պատշաճ չի իրականացվել: Նույն հրամանի 33-րդ կետի համաձայն՝ ՓԲԸ-ի կողմից իրականացված չափման միջոցների ստուգաչափման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է հրապարակվեր պաշտոնական կայքում, որը հաշվետու ժամանակաշրջանում ևս չի կատարվել:

Համաձայն Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի՝ չափման միջոցների ստուգաչափման, չափագիտական վկայագրման աշխատանքները ենթակա են վճարման՝ մինչև 35.0 հազ. դրամի սահմաններում՝ լիազորված մարմնի սահմանած գների համապատասխան: Սակայն 19.02.2018թ. թիվ 132-Ն հրամանով աշխատանքների վճարման գները սահմանվել են 35.0 հազ. դրամի սահմաններում՝ հաշվի չառնելով ավելացված արժեքի հարկը: Արդյունքում, չպահպանելով Օրենքի պահանջները, տնտեսվարող սուբյեկտի կողմից վճարման ենթակա գումարը (ներառյալ հարկերը) գերազանցել է 35.0 հազ. դրամը:

Հարկ է ընդգծել, որ 2018թ. վերոնշյալ որոշման ընդունման հիմնավորումները, ստուգաչափման ենթակա աշխատանքների համար գանձվող վճարի չափի փոփոխման հիմքում ընկած մասնագիտական հաշվարկներն ու հիմնավորումները ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից չեն տրամադրվել:

ՓԲԸ-ի 2018թ. ստուգաչափումից ստացած եկամուտների նվազման պատճառներից մեկն էլ մասամբ պայմանավորված է եղել 19.02.2018թ. թիվ 132-Ն հրամանով սահմանված ստուգաչափման ենթակա մի շարք չափման միջոցների գների չհիմնավորված նվազմամբ:

Այսպես, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի հաշվիչների, հոսանքի և լարման տրանսֆորմատորների, արագաչափերի և մի շարք այլ չափման միջոցների ստուգաչափման սակագների չհիմնավորված նվազման հետևանքով ՓԲԸ-ի եկամուտները նվազել են շուրջ 21,000.0 հազ. դրամով:

ՉԱԻ ղեկավարողը Համաձայն «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի՝ չափման միջոցների ստուգաչափման, չափագիտական վկայագրման աշխատանքները ենթակա են վճարման՝ մինչև 35000 դրամի սահմաններում՝ լիազորված մարմնի սահմանած գներին համապատասխան:

Օրենքում նշված գնի առավելագույն չափի մեջ չի կարող ներառված լինել հարկային պարտավորության գումարը, քանի որ նախ՝ լիազորված մարմնի՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի՝ 2018թ. փետրվարի 19-ի թիվ 132-Ն հրամանի հավելվածով սահմանված ստուգաչափման գները նշված են առանց հարկերի, բացի այդ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստուգաչափման լիազորություն կարող է տրվել համապատասխան իրավաբանական անձանց, որոնք գործունեություն կարող են իրականացնել այլ հարկատվական, քան Ընկերության համար գործող ԱԱՀ-ն: Նման պայմաններում չափագիտության ոլորտում գնի սահմանման օրենսդրական կարգավորումները չեն կարող ներառել

հարկերն ու անհավասար պայմաններ առաջացնել ոլորտում գործունեություն իրականացնող սուբյեկտների համար:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018թ. փետրվարի 19-ի թիվ 132-Ն հրամանով սահմանված ստուգաչափման սակագների հիմնավորումները Ձեզ տրամադրել է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը:

Հաշվեքննողի արձագանք Ձի ընդունվել, քանի որ «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվածը իմպերատիվ նորմ է և ենթակա չէ մեկնաբանման:

**ՓԲԸ-ն մատուցել է նաև տրամա-
չափարկման ծառայություններ՝
չունենալով դրա իրավասությունը:**

Հարկային հաշիվների ընտրանքային ուսումնասիրությունից պարզվել է, որ 2017-2018թթ. ՓԲԸ-ն մատուցել է նաև տրամաչափարկման ծառայություններ՝ չունենալով դրա իրավասությունը, քանի որ

համաձայն Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի՝ չափման միջոցների տրամաչափարկում կարող են իրականացնել ՀՀ կառավարության սահմանած կարգով հավատարմագրված իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը: Տրամաչափարկման ծառայություններ է մատուցվել ՀՀ ճանապարհային ոստիկանությանը, Գեոպրոմայնինգ գոլդ ՍՊԸ-ին, Երևանի կոնյակի գործարան ՓԲԸ-ին, Արմավիրի ԲԿ ՓԲԸ-ին, Արարատի ԲԿ ՓԲԸ-ին, Շտապբուժօգնություն ՓԲԸ-ին, ԼՂՀ առողջապահության նախարարության Ստեփանակերտի շտապ բժշկական օգնության կայանին, Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ ՍՊԸ-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին, Մաջիդ Ալ Ֆութաիմ հայփերմարքեթս Էյ Էմ ՍՊԸ-ին և այլ կազմակերպություններին, որոնց համար իրականացրել է ակոտեստերների, կշեռքների, ճառագայթային հսկողություն իրականացնող սարքավորումների տրամաչափարկում: Ծառայությունները մատուցելու ընթացքում չի պահպանվել 19.02.2018թ. թիվ 132-Ն հրամանով սահմանված ակումետրերի գները, մասնավորապես, 2018թ. 8.0 հազ. դրամի (առանց ԱԱՀ) փոխարեն ստուգաչափման համար հայտատուներից գանձվել է 10.0 հազ. դրամ (առանց ԱԱՀ), իսկ տրամաչափարկման ծառայությունների համար՝ 30.0 հազ. դրամ (առանց ԱԱՀ):

ՁԱԻ դիրքորոշում Ընկերության կողմից փաստացի տրամաչափարկման ծառայություններ չեն մատուցվել և հաշվապահական փաստաթղթերում այդ եզրույթն օգտագործվել է պայմանական: Բանն այն է, որ ակումետրերի ստուգաչափման գինը ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018թ. փետրվարի 19-ի թիվ 132-Ն հրամանով սահմանված է 8000 դրամ (առանց ԱԱՀ), սակայն դրանց ստուգաչափումն իրականացնելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ նախապարաստական գործողությունները՝ անալիզատորի ցուցմունքների ճշգրտում, անալիզատորի ցուցմունքի ստուգում, անալիզատորի ցուցմունքների կարգաբերում, որը կարգավորվում է ըստ ԳՕՍՏ 8.838-2013-ի և նշված տրամաչափարկման բառի տակ նկատարվել է ակումետրի ստուգաչափման համար անալիզատորների ցուցմունքի կարգաբերումը:

Հաշվեքննողի արձագանք Ձի ընդունվել, քանի որ ՓԲԸ-ի գործառույթները սահմանող իրավական որևէ ակտով նախատեսված չէ «պայմանական» գործառույթ (այդ թվում՝ «տրամաչափարկում» կատարելը):

Հարկ է նաև նշել, որ ՓԲԸ-ն իրականացրել է նաև ավտոկշեռքների և այլ չափման միջոցների տեխսպասարկման և կարգաբերման աշխատանքներ, որոնք

կանոնադրությամբ ներառված չեն եղել վերջինիս գործունեության տեսակների մեջ, հետևաբար չի ունեցել գործունեության այդ տեսակները իրականացնելու իրավասությունը: 2017-2018թթ. գործունեության վերոնշյալ տեսակներից ՓԲԸ-ի մուտքերը կազմել է 7,199.0 հազ. դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ստուգաչափման վկայականների, վկայագրերի, դրոշմների արտատիպերի, ինքնակաշուն դրոշմների, տեսակի հաստատման սերտիֆիկատների և վկայագրերի գնման և հաշվառման գործընթացը հստակ չի կանոնակարգվել:

Ստուգաչափման արդյունքների վավերացման համար անհրաժեշտ միջոցների ձեռքբերումը, հաշվառումը և խոտանումը

ՓԲԸ-ի կողմից ստուգաչափման վկայականների, վկայագրերի, դրոշմների արտատիպերի, ինքնակաշուն դրոշմների, տեսակի հաստատման սերտիֆիկատների

և վկայագրերի գնման և հաշվառման գործընթացը հստակ չի կանոնակարգվել: Ավելին, ՓԲԸ-ում վերոնշյալ փաստաթղթերի հաշվառման վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը չի տրամադրվել հաշվեքննություն իրականացնող անձանց: Մասնավորապես, 2017թ. պողպատե և ռետինե դրոշմների արտատիպերի, եռամսյակային և տարեկան ինքնակաշուն դրոշմների, 2017թ. և 2018թ. տեսակի հաստատման վկայագրերի հաշվառման փաստաթղթերը, ինչպես նաև 2016թ. վերջնական մնացորդների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը բացակայել է: Դրանից բացի, բացակայել է նաև ձևաթղթերի, ինքնակաշուն դրոշմների և դրոշմների արտատիպերի անհրաժեշտ քանակի պլանավորման, տպագրման, հաշվառման և խոտանման կարգը:

Այսպես, գնման և հաշվառման գործընթացն ուսումնասիրելիս արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- եռամսյակային և տարեկան ինքնակաշուն դրոշմների գնման պայմանագրերի տեխնիկական բնութագրերով նախատեսվել է ձեռք բերել «ստուգաչափման ինքնակաշուն դրոշմանիշեր՝ տվյալ ձևաչափի համար սահմանված նորմերի և պահանջների համապատասխան», այն դեպքում, երբ սահմանված նորմեր և պահանջներ առհասարակ գոյություն չի ունեցել,
- 01.11.2017թ. Պարմա-Պրինտ ՍՊԸ-ի հետ կնքված ինքնակաշուն դրոշմանիշի գնման պայմանագրի տեխնիկական բնութագրում նախատեսվել է յուրաքանչյուր եռամսյակի համար ձեռք բերել 1000 հատ «ստուգաչափման ինքնակաշուն դրոշմանիշեր», ընդհանուր թվով 4 000 հատ, այն դեպքում, երբ պայմանագրի մեկ այլ կետով ընդհանուր քանակ է սահմանվել թվով 3 000 հատը,
- 2017թ. տեսակի հաստատման թվով 84 հատ սերտիֆիկատի, չափագիտական վկայագրման թվով 150 հատ վկայագրի, իսկ 2018թ. ստուգաչափման թվով 5 000

հատ վկայականի և տարեկան ինքնակաշուն թվով 10 230 հատ դրոշմի ձեռքբերման հիմքերը չեն տրամադրվել,

- ՓԲԸ-ի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օգտագործված ձևաթղթերի և դրոշմների քանակները հնարավոր չի եղել հստակ գնահատել, քանի որ տրամադրված տեղեկատվությունների միջև եղել է անհամապատասխանություններ: Մասնավորապես, տարածքային բաժինների և էլեկտրական հաշվիչների չափումների և փորձագիտական բաժնի կողմից 2017թ. օգտագործվել է թվով 223 230 հատ, իսկ 2018թ.՝ թվով 138,430 հատ ինքնակաշուն համարակալված դրոշմ, այն դեպքում, երբ տրամադրված մեկ այլ տեղեկատվության համաձայն էլ համապատասխան բաժինների կողմից 2017թ. ստուգաչափվել է ընդամենը թվով 124 056 հատ, իսկ 2018թ.՝ թվով 109,158 հատ չափման միջոց:
- Մինչև 2017թ. ինքնակաշուն տարեկան և եռամսյակային դրոշմների, պողպատե և ռետինե դրոշմների արտատիպերի հաշվառումը իրականացվել է «Ձանգվածի, ծավալի և անկյունագծային չափումների լաբորատորիայի» կողմից, որի վերաբերյալ փաստաթղթավորված հիմնավորում, առ այն, որ հաշվառումը պետք է իրականացնել կոնկրետ այդ լաբորատորիան գոյություն չի ունեցել: Ավելին, վերջինիս կողմից իրականացված հաշվառման վերաբերյալ քանակական ամբողջական տեղեկատվությունը ևս բացակայել է, ինչը հնարավորություն չի տվել համակարգված վերլուծություններ իրականացնել ստուգաչափման ձևաթղթերի, ինքնակաշուն դրոշմների և դրոշմի արտատիպերի ձեռքբերված և օգտագործված քանակների վերաբերյալ:
- 2017-2018թթ. տեսակի հաստատման վկայագրերի հաշվառում ՓԲԸ-ի կողմից ընդհանրապես չի իրականացվել:

ՓԲԸ-ն 2017թ. ստուգաչափման թվով 300 հատ համարակալված դրոշմ, ստուգաչափման թվով 4 հատ ծմմ պողպատե դրոշմի, թվով 1 հատ ճմմ պողպատե դրոշմի, թվով 1 հատ 3,5մմ պողպատե դրոշմի և թվով 4 հատ 18մմ ռետինե դրոշմի արտատիպեր տրամադրել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման կենտրոն ՊՈԱԿ-ին:

Խոտանման գործընթացը ՓԲԸ-ում թեև կանոնակարգված չի եղել, բայց յուրաքանչյուր եռամսյակի վերջում տվյալ ժամանակահատվածում ժամկետանց չօգտագործված և վնասված բոլոր ձևաթղթերը, ինքնակաշուն դրոշմները, իսկ պողպատե և ռետինե դրոշմների արտատիպերը՝ տարեվերջին, գլխավոր տնօրենի հրամանով ներկայացվել են ոչնչացման՝ կտրատման կամ հղկման միջոցով և դրանց արդյունքները վավերացվել են ակտով: Ոչնչացման վերաբերյալ կազմված ակտերի և ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համադրման արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

- 2017թ. խոտանվել է չափագիտական վկայագրման թվով 819 հատ վկայագիր, սակայն ոչնչացման ակտերով արձանագրվել է թվով 793-ը:
- 2017թ. ձեռքբերված ստուգաչափման թվով 82 հատ 8մմ պողպատյա դրոշմակնիքներից տարեվերջին ոչնչացվել է թվով 41-ը, թվով 23 հատ 6մմ պողպատյա դրոշմակնիքներից՝ թվով 24-ը, թվով 35 հատ 18մմ ռետինե դրոշմակնիքից՝ 36-ը:
- 2018թ. ՓԲԸ-ի առաջին բաժինը ստացել է ստուգաչափման թվով 61 հատ 8մմ պողպատյա դրոշմ, սակայն տարեվերջին ոչնչացվել է թվով 40-ը, իսկ թվով 1-ն էլ՝ կորել է:
- 2018թ. խոտանվել է ստուգաչափման թվով 976 հատ վկայական, սակայն ոչնչացման ակտերով արձանագրվել է թվով 983-ը:

2017թ. չի խոտանվել ոչ մի համարակալված դրոշմ, իսկ 2018թ. խոտանվել է թվով 205 հատ դրոշմ, որից թվով 202-ը՝ օգտագործման ժամկետի ավարտով պայմանավորված, այն դեպքում, երբ ՓԲԸ-ի առաջին բաժնի և համապատասխան այլ բաժինների մոտ տարեվերջի թվով 40 469 հատ մնացորդը ևս ունենալով ժամկետայնության խնդիր չի ոչնչացվել:

Վերոնշյալը թույլ է տալիս եզրակացնելու, որ հաշվառման գործընթացի վերաբերյալ տվյալների բացակայության, ոչ լիարժեքության, անհամապատասխանության հետևանքով, հնարավոր չի եղել գնահատել դրա արժանահավատությունը: Հաշվառման գործընթացում իրականացված աշխատանքները համակարգված բնույթ չի կրել, ստուգաչափման և չափագիտական վկայագրման արդյունքների վավերացման գործընթացում օգտագործվող միջոցների ձեռքբերման, հաշվառման և խոտանման գործընթացը պարունակել է էական ռիսկեր:

ՉԱԻ դիրքորոշում 2018 թ.-ին Առաջին բաժինը ստացել է 61 հատ 8 մմ տրամագծով պողպատյա դրոշմներ, որոնցից 20 հատը՝ I: II; III; IV եռամսյակների նշագրումով, որոնց օգտագործման ժամկետը կապված է մաշվածության հետ և տարեվերջին չի խոտանվում:

Գազի և հեղուկների ծախսի չափումների բաժնի կողմից 2019 թվականի հունվարին խոտանված 7 վկայականներ (8405; 8406; 8407; 8408; 8409; 8410; 8434 համարներով), թյուրիմացաբար հայտնվել են 2018 թվականի չորրորդ եռամսյակի խոտանման ենթակա վկայականների ցանկում և խոտանվել են: Սա է ֆիքսված անհամապատասխանության պարճառը:

Հաշվեքննողի արձագանք Չի ընդունվել, քանի որ ՓԲԸ-ի Առաջին բաժինը խոտանման է ներկայացրել 2018թ. բոլոր ժամկետանց դրոշմները՝ բացառությամբ 40 469 հատ համարակալված դրոշմների և 20 հատ պողպատյա դրոշմի, որի չներկայացման պարճառը անհիմն է և անտրամաբանական:

Չափման միջոցների չափագիտական փորձաքննությունը և չափագիտական հսկողությունը

Չափման միջոցների փորձաքննությունն իրականացվում է դատարանի, դատախազության, արբիտրաժի, սպառողների և նրանց իրավունքները պաշտպանող

կազմակերպությունների գրավոր առաջարկով կամ պահանջով՝ չափման միջոցների չափագիտական բնութագրերը որոշելու նպատակով: 2017թ. և 2018թ. փորձաքննություն կատարելու համար ՓԲԸ-ի կողմից ստացվել է երկուական պահանջ, որից 2017թ.՝ 4 հատ էլեկտրական էներգիայի հաշվիչների, իսկ 2018թ.՝ 2 հատ կշեռքի չափագիտական փորձաքննություն իրականացնելու համար:

Չափագիտական վերահսկողությունն իրականացնում է ՀՀ կառավարության լիազորած մարմինը: Համաձայն Օրենքի՝ չափագիտության վերահսկողության խնդիրներն են օրենսդրական չափագիտական ոլորտներում հաստատված տեսակի չափման միջոցների կիրառումը, չափումների կատարման վկայագրված մեթոդիկաների առկայությունը, չափումների միասնականության ապահովման բնագավառում տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանումը:

Չափագիտական ոլորտի վերահսկողական համակարգը եղել է ոչ լիարժեք և փաստացի չի գործել:

Օրենքի 20-րդ հոդվածով սահմանված վերահսկողության համակարգը եղել է ոչ լիարժեք և փաստացի չի գործել: ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կազմում գործող

շուկայի վերահսկողության տեսչության կողմից օրենսդրական չափագիտության ոլորտում 2017թ. իրականացվել է ընդհանուր թվով ընդամենը 73 ստուգում, որից թվով 28-ի դեպքում խախտում չի հայտնաբերվել, և տուգանք չի կիրառվել: 2018թ. արդյունքներով ստուգումների թիվը կազմել է թվով 100-ը, որից խախտում չի հայտնաբերվել թվով 57-ի մոտ: Պարտադիր ստուգաչափման ենթակա սարքավորումներ կիրառող առողջապահության ոլորտի կազմակերպություններում 2017թ. ստուգումներ է իրականացվել թվով 6, իսկ 2018թ. թվով 14 բժշկական կենտրոններում: Տաքսի ծառայություններից 2017թ. ստուգվել է թվով 2, իսկ 2018թ.՝ թվով 4 կազմակերպություններ:

➤ Չափագիտության ազգային մարմնի այլ գործառնություններ

Ազգային չափանմուշ ճանաչված չափման միջոց առհասարակ գոյություն չի ունեցել, չի իրականացվել նաև ելակետային չափման միջոցների տրամաչափարկման աշխատանքներ:

Համաձայն Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի՝ չափման միջոցը՝ որպես ազգային չափանմուշ ճանաչվում է Չափագիտության ազգային մարմնի կողմից ՀՀ կառավարության 21.11.2013թ. թիվ 1299-Ն որոշմամբ հաստատված կարգով: Վերոնշյալ

կարգի համաձայն՝ 31.12.2018թ. դրությամբ Չափագիտության ազգային մարմնի կողմից որպես ազգային չափանմուշ ճանաչված չափման միջոց ոչ միայն չի ստեղծվել, այլև առհասարակ գոյություն չի ունեցել:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում» ծրագրերի իրականացման համար ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և ՓԲԸ-ի միջև 19.01.2017թ. և 18.01.2018թ. կնքվել է համապատասխանաբար թիվ 2-17 և թիվ 2-18 դրամաշնորհի պայմանագրերը: Կնքված պայմանագրով, 2017թ. նախատեսվել է 50,000.0 հազ. դրամ, այդ թվում՝ աշխատավարձ՝ 30,000.0 հազ. դրամ, ԳԷՊԻ-0.5, ԳԷՊԻ-1, ԳԷՊԻ-2 էտալոնների վերականգնման, արդիականացման և պահպանման ծախսեր՝ 20,000.0 հազ. դրամ: Փաստացի ծախսը կազմել է 48,527.0 հազ. դրամ, այդ թվում՝ աշխատավարձ՝ 30,000.0 հազ. դրամ (աշխատանքներին մասնակցել է 21 մարդ), ԳԷՊԻ-0.5, ԳԷՊԻ-1, ԳԷՊԻ-2 էտալոնների վերականգնման, արդիականացման և պահպանման ծախսեր՝ 18,527.0 հազ. դրամ: 2018թ. պայմանագրով նախատեսվել է 45,000.0 հազ. դրամ, այդ թվում՝ աշխատավարձ՝ 40,000.0 հազ. դրամ, անտենային էտալոնների պահպանում և զարգացում՝ 5,000.0 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 44,226.0 հազ. դրամ, այդ թվում՝ աշխատավարձ՝ 40,000.0 հազ. դրամ (աշխատանքներին մասնակցել է 28 մարդ), անտենային էտալոնների պահպանում և զարգացում՝ 4,226.0 հազ. դրամ:

Համաձայն Օրենքի 11-րդ հոդվածի Չափագիտության ազգային մարմինն ապահովում է ազգային չափանմուշների տրամաչափարկում այլ երկրների չափագիտության ազգային ինստիտուտների չափանմուշների հետ: Վերոնշյալ գործառույթը ևս չի կատարվել, քանի որ ՓԲԸ-ն չի ունեցել ճանաչված ազգային

Ստանդարտ նմուշների վկայագրում երբևէ չի իրականացվել, դրա վերաբերյալ տեղեկատվություն պաշտոնական կայքում չի հրապարակվել, ինչպես նաև ՓԲԸ-ի տնօրենի կողմից չի սահմանվել ստանդարտ նմուշների վկայագրման աշխատանքների վճարման չափը:

չափանմուշ: Հաշվետու ժամանակահատվածում, ՓԲԸ-ն չի իրականացրել նաև ելակետային չափման միջոցների տրամաչափարկման աշխատանքներ:

Համաձայն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի՝ տրամաչափարկման ժամանակ կիրառվող ստանդարտ նմուշները ենթակա են վկայագրման: Վկայագրման կարգը սահմանվել է ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի 05.10.2015թ. թիվ 33-Վ հրամանով: Կարգի 5-րդ կետի համաձայն՝ այն տարածվում է իրավաբանական անձանց և

անհատ ձեռնարկատերերի վրա, որոնք ՀՀ տարածքում իրականացնում են ստանդարտ նմուշների մշակում, արտադրությունից թողարկում, ներմուծում, իրացում և օգտագործում: Համաձայն կարգի 9-րդ կետի՝ ստանդարտ նմուշներն օգտագործումից առաջ ենթակա են սկզբնական վկայագրման, իսկ սերտիֆիկատով սահմանված վկայագրման ժամկետի

ավարտից երկու ամիս առաջ դրանք ենթակա են պարբերական վկայագրման: 2017-2018թթ., և ընդհանրապես, ստանդարտ նմուշների վկայագրում երբևէ չի իրականացվել, ավելին՝ ստանդարտ նմուշի վկայագրման սերտիֆիկատ երբևէ չի էլ տպագրվել: Ստանդարտ նմուշների վկայագրման մասին տեղեկատվությունը պետք է լինի հրապարակային, սահմանված կարգով, պետք է տեղադրված լինի ՓԲԸ-ի պաշտոնական կայքում, ինչի մասին ևս տեղեկատվությունը բացակայել է:

Հաշվետու ժամանակահատվածում ՓԲԸ-ի տնօրենի կողմից չի սահմանվել նաև ստանդարտ նմուշների վկայագրման աշխատանքների վճարման չափը:

Ստուգաչափման ժամանակ կիրառվող աշխատանքային էտալոնները տրամաչափարկված չեն եղել, և չափումների կատարման մեթոդիկաների չափագիտական վկայագրում չի իրականացվել:

Հետևելիությունն ապահովելու համար ՓԲԸ-ն 2017թ. դեկտեմբերին «Չափումների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ում իրականացրել է ընդամենը հինգ չափման միջոցների տրամաչափարկման աշխատանքներ: Հաշվետու ժամանակաշրջանում չի պահպանվել 19.02.2018թ. թիվ 133-Ն հրամանի 5-րդ կետի պահանջը՝ ստուգաչափման ժամանակ

կիրառվող աշխատանքային էտալոնները տրամաչափարկված չեն եղել և հետևելիությունը չի ապահովվել:

Հաշվետու ժամանակահատվածում օրենսդրական չափագիտության ոլորտում չափումների կատարման մեթոդիկաների չափագիտական վկայագրում չի իրականացվել:

Համաձայն Օրենք 7-րդ հոդվածի 1-ին մասի՝ օրենսդրական չափագիտության ոլորտներում կիրառվող ստանդարտ նմուշները ենթակա են տեսակի հաստատման: 2017-2018թթ. ստանդարտ նմուշների տեսակի հաստատում չի իրականացվել: Ստանդարտ նմուշների տեսակի հաստատման գրանցամատյանի ձևը չի հաստատվել, ավելին՝ բացակայել է նաև ստանդարտ նմուշի տեսակի հաստատման գրանցամատյանի վարման կարգը: ՓԲԸ-ի կողմից որպես միջպետական ստանդարտ նմուշներ 2017թ. փոխճանաչվել

է թվով 31-ը, իսկ 2018թ.՝ թվով 32-ը:

2018թ. ՓԲԸ-ն չի իրականացրել Օրենքով վերապահված գործառույթը՝ կադրերի, լաբորատորիաների անձնակազմի և փորձագետների ուսուցում, վերապատրաստում չի իրականացրել:

Չափումների միասնականության ապահովման բնագավառում ազգային մարմինը կազմակերպում և իրականացնում է ինչպես կադրերի ուսուցում, մասնագիտացում, վերապատրաստում, օրենսդրական չափագիտության ոլորտում ստուգաչափող մասնագետների ուսուցում, այնպես էլ վերոգրյալ

ոլորտում տրամաչափարկման և փորձարկման լաբորատորիաների անձնակազմի վերապատրաստում, հավատարմագրման փորձագետների ուսուցում և շնորհում է համապատասխան վկայագրեր:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 19.12.2017թ. թիվ 1246-Ա հրամանով հաստատված ՓԲԸ-ի վարչակազմակերպական կառուցվածքում ուսումնական կենտրոնը չի ընդգրկվել, ինչի հետևանքով 2018թ. կադրերի, լաբորատորիաների անձնակազմի և փորձագետների ուսուցում, վերապատրաստում չի իրականացվել, չի կատարվել Օրենքով վերջինիս վերապահված գործառույթը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կառավարությանը՝

- 1) Քննարկել «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով պահանջված և ՀՀ կառավարության 11.02.2016թ. թիվ 113-Ն որոշմամբ սահմանված օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների ցանկում առկա մի շարք չափման միջոցների 2017-2018թթ. չափումների չիրականացման, հետևաբար նույն օրենքի 16-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն շահագործումն արգելված չափման միջոցների շուկայահանման ու դրանց արդյունքների օգտագործման հարցը:
- 2) Քննարկել 2017-2018թթ. ՀՀ մաքսային մարմնի կողմից «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21.04.2016թ. թիվ 393-Ն որոշման պահանջի այն է՝ մաքսային մարմինները ՀՀ տարածք ներմուծված չափման միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր ամիս սահմանված կարգով պետք է տրամադրեն չափագիտության լիազոր մարմնին, խիստ թերի (հաշվետու ժամանակահատվածում (24 ամիս), փաստացի տրամադրվել է ընդամենը 3 դեպքում, իրականացման ու դրա հետևանքների հարցը:
- 3) Քանի որ ՀՀ կառավարության 29.01.2016թ. թիվ 60-Ն որոշմամբ հաստատված «Սոցիալական և կենսական կարևոր նշանակություն ունեցող չափման միջոցների շուկայահանման» կարգի 6-րդ կետը սահմանում է՝ ներմուծողը կարող է շուկայահանել արտադրանքը միայն սահմանված ընթացակարգերով չափման միջոցի տեսակի հաստատման և առաջնային ստուգաչափման արդյունքում տրված փաստաթղթերը ստանալուց հետո, միևնույն ժամանակ, չափման միջոցների կիրառման ոլորտը կարգավորող վերոնշյալ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի պահանջների խախտման համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 158-րդ և 188-րդ հոդվածներով նախատեսված է պատասխանատվություն, առաջարկում ենք հանձնարարել ՀՀ պետական եկամուտների կոմիտեին՝ քննարկման առարկա դարձնել «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթի համաձայն տեղեկություններն անհապաղ համապատասխան պետական մարմիններին տրամադրելու հարցը:
- 4) Քննարկել Հայաստանի Հանրապետությունում պետական չափագիտական հսկողության և վերահսկողության ենթակա ոլորտներում, ներմուծված/արտադրված օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների ստուգաչափումների մակարդակի ու չափագիտական ապահովվածության ամբողջական վերլուծության բացակայության հարցը:

5) Քննարկել ՀՀ կառավարության 11.02.2016թ. թիվ 113-Ն որոշման հավելվածով սահմանված օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների ցանկի վերանայման հարցը, սահմանելով նորը՝ ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ծածկագրերի:

ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը՝

6) Վերանայել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 19.02.2018թ. թիվ 132-Ն հրամանի բովանդակությունը, քանի որ ստուգաչափման աշխատանքների համար վճարման գները սահմանվել են 35.0 հազ. դրամի սահմաններում՝ հաշվի չառնելով կիրառվող հարկերի գործոնը: Արդյունքում, տնտեսվարող սուբյեկտների կողմից վճարման ենթակա գումարը (ներառյալ հարկերը) գերազանցում է 35.0 հազ. դրամը ինչը հակասում է «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջին, այն է՝ չափման միջոցների ստուգաչափման, չափագիտական վկայագրման աշխատանքները ենթակա են վճարման՝ մինչև 35.0 հազ. դրամի սահմաններում՝ լիազոր մարմնի սահմանած գներին համապատասխան:

7) Քննարկել և վերանայել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 19.02.2018թ. թիվ 132-Ն հրամանով սահմանված՝ էլեկտրաէներգիայի, գազի, ջրի հաշվիչների, հոսանքի և լարման տրանսֆորմատորների, արագաչափերի և մի շարք այլ չափման միջոցների ստուգաչափման սակագների, առանց բավարար հաշվարկային հիմքերի, նվազեցման հարցը, ինչը բերել է եկամուտների նվազեցման:

8) Միջոցներ ձեռնարկել Հայաստանի Հանրապետությունում պետական չափագիտական հսկողության և վերահսկողության ենթակա ոլորտներում, ներմուծված/արտադրված օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների ստուգաչափումների մակարդակի ճշգրտման ու չափագիտական ապահովվածության ամբողջական վերլուծության կատարման ուղղությամբ:

9) Վերանայել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 19.02.2018թ. թիվ 133-Ն հրամանը, որով սահմանված ստուգաչափման արդյունքների վավերացման համար կիրառվող ձևանմուշները չեն համապատասխանում «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին, կիրառվող որոշ ձևանմուշների տեսակները և ձևը, առհասարակ, որևիցե նորմատիվ իրավական ակտով չի սահմանվել: Դադարեցնել իրավական ակտերով չնախատեսված և չնորմավորված ինքնակաշուն դրոշմների օգտագործումը, սահմանել վավերացման միջոցների ձևերն ու կիրառման կարգը:

«Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերությանը՝

- 10) Բացառել հաստատված նախահաշվով նախատեսված ծախսերի սահմանաչափերի գերազանցումը, իսկ դրանց անհրաժեշտության դեպքում՝ հիմնավորել և սահմանված կարգով համաձայնեցնել Լիազոր մարմնի հետ:
- 11) ՓԲԸ-ի աշխատակիցների գործուղումների հաշվարկման և վճարման դեպքում առաջնորդվել բացառապես ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված «Գործուղման մեկնած աշխատակիցների գործուղման ծախսերի հատուցման վճարման» կարգով նախատեսված պահանջներով:
- 12) Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ ՓԲ ընկերության ակտիվների և պարտավորությունների գույքագրումն այսուհետ իրականացնել սահմանված ժամկետներում՝ տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ:
- 13) Այսուհետ՝ ՓԲԸ-ի կարիքների համար կատարվող գնումներն իրականացնել բացառապես գնումների ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:
- 14) Գործուն միջոցներ ձեռնարկել 2014թ-ից սկսած ձևավորված 58,381.0 հազ. դրամի դեբիտորական պարտքերը հավաքագրելու ուղղությամբ:
- 15) Վերանայել ՓԲԸ-ի աշխատակիցների շրջանում պոտենցիալ հայտատուների (պատվիրատուների) մոտ համատեղությամբ աշխատող հանդիսացող անձանց պաշտոնեական պատասխանատվության կարգավիճակը՝ բացառելով հնարավոր ռիսկերը:
- 16) Վերանայել 24.08.2012թ. «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ-ի հետ կնքված սարքավորումների փոխադարձ համատեղ օգտագործման պայմանագիրը՝ հաշվի առնելով սարքավորումների համատեղ օգտագործման արդյունավետությունն ու նպատակահարմարությունը և հստակեցնելով օգտագործման պայմանները:
- 17) Վերանայել 19.12.2013թ. «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ-ի հետ կնքված վարձակալության պայմանագիրը՝ հաշվի առնելով փաստացի զբաղեցրած տարածքի մակերեսը, 1քմ-ի գործող շուկայական արժեքը և պահպանման ծախսերը: Միջոցներ ձեռնարկել՝ մինչ օրս փաստացի զբաղեցրած և վարձակալության պայմանագրով նախատեսված տարածքի մակերեսի տարբերության համար չվճարված գումարի գանձման ուղղությամբ:
- 18) Նախաձեռնել տեսակի հաստատման, ստուգաչափման և չափագիտական վկայագրման արդյունքները վավերացնելու հաշվառման/խոտանման կարգի մշակման/հաստատման գործընթաց:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, հաշվեքննության օբյեկտի ղեկավարը, ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հաշվեքննիչ պալատին տրամադրում է ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն: